# Azg
Azg
armenian daily

Օգոստոս 19
Հինգշաբթի
1993

ՈՒՍՄՆԱՎՈՐ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Թիվ 158 (409)
Գինը 10 ռ.
Ծավալ 69149
Երևան 375010
Խորենացու 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU


Հայ.ԽՍՀ Գիտ. Գրադարան Հայ.ԽՍՀ Գիտ. Ակադ. Մասնաճյուղ Ա. Մասեռյան անվ. Գրադարան

Մեկնություն

## Ռաֆաելլին անմեղ, թե մեղավոր

Իտալական դատարանը ծանուցում է փոխանցել ԵԱՀԽ Մինսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆաելլիին, որի մեջ նշված է, թե վերջինս ոչեմ ենթարկվի նախաքննության: Այդ մասին ՀՀ ԱԳՆ առաջին փոխնախարար Ժիրայր Լիոդարիսյանին հայտնել է Ռաֆաելլիի տեղակալ Մարիո Սիկան: Ըստ իտալական օրենքի, դա տվյալ անձին դեռևս չվարկաբեկող միջոց է, մինչդեռ, ըստ որոշ. Լիոդարիսյանի, իտալական թերթերը ժամանակից շուտ աղմուկ են բարձրացրել: Հնարավոր է Ռաֆաելլին հետագայում մեղադրվի, բայց հանի որ առայժմ ինքնությունը շարունակվում է, ոչեմ է կարծել, որ նա անմեղ է: Փոխնախարարը այն կարծիքը հայտնեց, թե նա թերեւս մեղադրվում է կուսակցական կաշառակերության գծով եւ ոչ անհատական: Եւ եթե հանկարծ Ռաֆաելլիի անձի հետ բարդություններ առաջանան, ապա Մինսկի խմբի նախագահումը հավանական է կստանձնի Մարիո Սիկան:

«Ազգ»

Կիրգիզիայում

## Նոր ժամանակացույց, նոր պատասխան

ԵԱՀԽ Մինսկի խմբի ներկայացրած ժամանակացույցը շատ ավելի բարելավված է, մանրամասն նաեւ այն բանի, որ Հայաստանը կարողացավ մտցնել առաջարկվածի հարցը, անկախ ժնեւի բանակցություններ ընթացքից: Այդ իսի ընդհանրական տվեց Ղարաբաղի հարցով Մինսկի խմբի ներկայացրած նոր ժամանակացույցին ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիոդարիսյանը, ամփոփելով օգոստոսի 9-13-ը Հռոմում տեղի ունեցած ինչպիսի, Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ոչ պաշտոնական խորհրդակցությունների արդյունքները: Առանձին-առանձին եւ համատեղ քննարկումներից ու կողմերի դիրքորոշումներ լսելուց հետո օգոստոսի 13-ին ներկայացվել է Մարիո Ռաֆաելլիի նամակը, ժամանակացույցի նոր տարբերակը եւ երկու փաստաթղթեր հակամարտության գոտու սահմանների ու համատեղ համակարգող հանձնաժողովին տվող ցուցմունքների վերաբերյալ: Ռաֆաելլին խնդրել է, որ այսօր, օգոստոսի 19-ին կողմերը պատասխան տան: Պրն. Լիոդարիսյանը նշեց, որ 60-օրյա զինադադարը այդ փաստաթղթով կվերանորոգվի մինչեւ Մինսկի կոնֆերանսի բացումը, որով ռազմական գործողությունների դադարեցումը կերկարի: Եւ եթե համատեղ հանձնաժողովի փաստաթղթի վերաբերյալ Հայաստանի բոլոր առաջարկները ընդունվեն, ապա հակամարտության գոտու վերաբերյալ դեռեւս կան խնդիրներ: Ըստ փոխնախարարի, Մինսկի խումբը դիտողությունների ինքնարկման համար կհրավիրի հավելյալ խորհրդակցություն:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի կողմից այդ առաջարկության ընդունմանը, ապա պրն. Լիոդարիսյանի կարծիքով հարցը ոչ այնքան մերժելու կամ ընդունելու մեջ է, որքան մերժելու ձեւ ու նոյնակը գտնելու կողմերից մեկի գործնական առաջարկություններով հանդես գալու ձեւով: Նրա կարծիքով, Մինսկի խմբի հետ ինքնարկումների ժամանակ Հայաստանն արծարծել է նաեւ Ադրբեջանի ներքին քաղաքական իրավիճակը: Մինսկի խումբը դեռեւս չի ճշտել, թե որ թվականին նոր ժամանակացույցը կկիրառվի: Ընդ որում, Ռուսաստանի դեսպան Կազիմիրովը նույնիսկ նշել է, թե հույս չկա, որ այդ ժամանակացույցն իրականացվի մինչեւ Ադրբեջանի ներքին իրավիճակի կայունացումը: Խոսելով հակամարտության գոտեների մասին, պրն. Լիոդարիսյանը նշեց, որ վերջնական տարբերակում եղել են որոշակի փոփոխություններ: Հայաստան-Նախիջեւան սահմանագծով այդ գոտին սահմանվում է 10 կմ-ոտի Հայաստան եւ 10 կմ դեպի Նախիջեւան: Հայաստան-Ադրբեջան սահմանագիծը. 20 կմ դեպի Հայաստան, իսկ Ադրբեջանինը մինչեւ Քուռ գետը. այսինքն Ադրբեջանի 2/5-ը մտնում է այդ գոտու մեջ (ներառյալ Լեռնային Ղարաբաղը. եվ լախի երկաթգիծը). Մինգեչաուրից մինչեւ Աղջաբեդիի տակ, այնտեղից էլ 48-րդ միջօրեականով մինչեւ Իրանի հետ սահմանը: Սահմանման ընթացքը աշխարհագրական գծերով է, ոչ թե սահմաններով:

Իսկ հանձնաժողովը պետք է օժանդակի դիտորդների խմբին ռազմատեխնիկական հարցեր լուծելու համար: Հանձնաժողովի կազմում կան նաեւ 3 կողմերի ներկայացուցիչները:

Դիմնական փոփոխությունները վերաբերում են Ղարաբաղին, ուստի փոխնախարարի ասելով, վերջինս էլ պետք է որոշի:

Ա. Հ.

Պատերազմներ

# ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌՄԲԱԿՈԾԻՉՆԵՐԸ 10 ՌՈՒՄԲ ՆԵՏԵՑԻՆ ԿԱՊԱՆԻ ՎՐԱ

*Հայաստանը դիմում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին*

**Երեկ, օգոստոսի 18-ին, առավոտյան ժ. 7:06-ին ադրբեջանական զինված ուժերին պատկանող Սու-25 տիպի երեք ինքնաթիռ, ցածր բարձրության վրա թռչելով, ներխուժել են Հայաստանի Հանրապետության օդային տարածք եւ 10 ֆուգասային ու գնդիկավոր ռումբ նետել Կաղան խաղաղ կենտրոնական հատվածում: Զոհվել են 7 խաղաղ բնակիչ, վիրավորվել 34 մարդ, որից 5-ը՝ ծանր: Կաղանի խաղաղային խորհրդի նախագահ Ռադիկ Սարուխանյանը Սնարի թղթակցին ասաց, որ առկա են բնակելի եւ հասարակական շենքերի զգալի ավերածություններ:**

Կաղանի վրա հարձակման կապակցությամբ երեկ ՀՀ արտգործնախարարությունը հանդես է եկել մի հայտարարությամբ, որում ասվում է. «Հայաստանի խաղաղների ու բնակավայրերի չդադարող օդային ռմբակոծումներն ու սահմանային սադրանքները հերթական աղացույցն են Ադրբեջանի ռազմատենչ խաղաքականության, իշխանության վերին ոլորտներում չդադարող պայքարի, որի հետեւանքով այդ պետության քաղաքական որոշ շրջանակներ չեն հրաժարվում Հայաստանը լայնածավալ զինված հակամարտության մեջ ներքաշելու եւ այդպիսով Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված քաղաքական ճգնաժամը էլ ավելի խորացնելու իրենց մտադրությունից»:

Այնուհետեւ հայտարարության մեջ ասվում է, թե ադրբեջանական հանրապետության կողմից ռազմական գործողությունների սանկցիայի կատարմամբ Հայաստանի Հանրապետությունն արտահերթ նիստ հրավիրելու պահանջով այսօր՝ կղզիի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ դատարարելու համար Ադրբեջանի գործողությունները: Միաժամանակ երեկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը խոր ցավակցություն հայտնեց զոհվածների հարազատներին ու մերձավորներին եւ խստորեն դատապարտեց խաղաղ բնակչության նկատմամբ ադրբեջանական կողմի այդ վայրագ գործողությունները, որոնք հետաքրքրում են մի նոր տակ. պատերազմական գործողությունների մեջ ներքաշել Հայաստանի Հանրապետությանը եւ նենգափոխելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, այն ներկայացնել իբրեւ հայ-ադրբեջանական հակամարտություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարեց նաեւ, որ նման գործողությունների ողջ պատասխանատվությունն ընկնում է ադրբեջանական կողմի վրա:

Միեւնույն ժամանակ, երեկ ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիոդարիսյանը հայտարարեց, որ թեեւ Հայաստանը կարող է պատասխան միջոցներ ձեռնարկել, սակայն դա ամենեւին չի օգնի խնդրի խաղաղ կարգավորմանը:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնեցին, որ երեկ ժամը 1:30-3-ը զրահամեքենաներից գնդակոծվել են Երասխավանի պաշտպանական դիրքերը, իսկ ժամը 7:14-ին Իջեւանի շրջանի օդային տարածքում դիտվել են ադրբեջանական բանակի Սու-25 եւ Միգ-25 ինքնաթիռներ, որոնք կատարել են հետախուզական թռիչքներ: Նախորդ օրը գնդակոծվել են նաեւ Տաուշի Ներքին Կարմիրաղբյուր գյուղի պաշտպանական դիրքերը: «Ազգ»

Դարաբաղ

## ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀՆԳՕՐՅԱ ԶԻՆԱԴԱԴԱՐ

**Օգոստոսի 17-ին Բաքվից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի հասցեով երկու նամակ է ստացվել՝ Հեյդար Ալիեւի, պաշտպանության նախարարի պաշտոնակատար Աբիեւի, փոխվարչապետ Գուլիեւի ստորագրությամբ, որով փոխվարչապետ Գուլիեւին լիազորվում է 5 օրվա ընթացքում բանակցություններ վարել Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի բարձրագույն ղեկավարների միջեւ հանդիպման կազմակերպման համար եւ այդ ընթացքում խնդրվում է հնգօրյա զինադադար: Այդ կապակցությամբ մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ երեկ հանդիպեց ԼՂՀ արտգործնախարար ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ եւ պաշտպանության նախարար ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ հետ եւ խնդրեց մեկնաբանել դա:**

Արկադի Ղուկասյան. «Ադրբեջանի ղեկավարությունն ի վերջո սկսել է գիտակցել, որ միայն երկկողմ բանակցությունների ուղիով է հնարավոր հասնել Ղարաբաղի ճգնաժամի խաղաղ կարգավորման գործում իրական արդյունքների: Մնում է միայն ափսոսալ, որ այդ դարձ ճշմարտությունը հարեւան հանրապետությունում ընկալել են ուշացումով»:

Սերժ Սարգսյան. «Ես կասկածամտորեն եմ վերաբերում Ադրբեջանի նոր առաջարկներին, քանի որ զինադադարի մասին նախկին պայմանավորվածությունների փորձը վկայում է, որ հարեւան հանրապետության ղեկավարությունը շահագրգռված չէ հակամարտության խաղաղ կարգավորման մեջ եւ ժամանակավոր զինադադարներն օգտագործում է ռազմական կարողության աճեցման եւ Լեռնային Ղարաբաղի դեմ նոր հարձակողական գործողությունների կազմակերպման համար: Այս տարվա հուլիսի 24-ին եւ 28-ին զինադադարի ժամկետի լրացումից հետո ադրբեջանական բանակն անցել է լայնածավալ հարձակման Ասկերանի, Մարտունու եւ Հադրութի ուղղություններով: Ադրբեջանի վերջին առաջարկները չե՞ն հանդիսանում արդյոք ժամանակի հերթական ձգձգումներ իր բարոյալքված բանակը վերախմբավորելու եւ մեր հանրապետության դեմ նոր հարձակողական ծրագիր մշակելու համար»:

«Ազգ»

**Հադրութը ռմբակոծվել է օդից:** Օգոստոսի 18-ին առավոտյան ժամը 7-ին մոտ մի քանի ադրբեջանական զոհային ինքնաթիռներ խախտել են ԼՂՀ օդային տարածքը եւ ռմբակոծել հայկական ուժերի պաշտպանական դիրքերը Հադրութի շրջանի հարավային եւ հարավ-արեւմտյան հատվածներում: Վերջին տվյալների համաձայն, Արցախի զինված ուժերը Ֆիզուլու եւ Ջեբրայիլի սահմանային գոտում շարունակում են ամրապնդվել նոր դիրքերում, կասեցնում են հակառակորդի բոլոր փորձերը անցնելու հակահարձակման եւ միջոցներ են ձեռնարկում Ֆիզուլու, Ջեբրայիլի եւ Կուբաթլիի կրակակետերը լեցնելու ուղղությամբ: «Ազգ»

Մեկնաբանություն

## Ղարաբաղը դժգոհ Հռոմի հանդիպման արդյունքներից

Ղարաբաղյան կողմը դժգոհ է ԵԱՀԽ Մինսկի խմբի «անհետաձգելի միջոցառումների գրաֆիկի» նոր խմբագրությամբ նախատեսված ԼՂՀ խաղաղ բնակչության անվտանգության երաշխիքներից, օգոստոսի 18-ին Սնարի թղթակցին հայտարարեց այսպես երեւանում գտնվող ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը: Նա գլխավորում էր Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունն ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի խմբի մասնակից երկրների վերջերս Հռոմում կայացած հանդիպման ժամանակ:

Նախարարի խոսքերով, առաջարկված փաստաթղթում շատ ձեւակերպումներ ճաղաղ բնույթ ունեն, ինչը կարող է հանգեցնել մշակված ծրագրի կատարման ընթացքում հակամարտ կողմերի երկակի մեկնաբանման:

Գրաֆիկի իրականացման մեխանիզմի հետակ ձեւակերպումների, ինչպես նաեւ ԼՂՀ բնակչության անվտանգության առավել արդյունավետ երաշխիքների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների արած առաջարկությունները պատշաճ ընդունում չգտան Հռոմի հանդիպման մասնակիցների կողմից, որն իր հերթին չի կարող չհարուցել Լեռնային Ղարաբաղի պատվիրակության համապատասխան արձագանքը, եզրակացրեց Արկադի Ղուկասյանը:

Սնարի

Ընդհանրություն

## Բոսնիա. Հակասություններ օգնության շուրջ

«Սարաեւոյի աղաբազմականացման եւ ՄԱԿ-ի կառավարման տակ դնելը կգործի թերեւս միայն խաղաղության ամբողջական ծրագրի որդեգրման դեպքում», հայտարարել է ժնեւում ընթացող բոսնիական բանակցությունների խոսնակ Ջոն Միլսը: Նախնական համաձայնության համաձայն, ՄԱԿ-ը կկառավարի Սարաեւոյի 10 վարչական շրջաններից 9-ում: Սերբերի կողմից հսկվող Պալե շրջանը չի ներառնվի: Սերբերի ղեկավար Ռադովան Կարաջիչի, խորվաթների առաջնորդ Մատե Բոբանի եւ Բոսնիայի մուսուլման նախագահ Ալիյա Իզեթբեկովիչի հանդիպումներում նկատելի է լուծումների լուրջ որոնումը: Մասնավորապես, Իզեթբեկովիչը եւ Բոբանը քննարկել են Մոստարի մարդասիրական օգնության եւ կենտրոնական Սերբիայի հարցերը, որտեղ նրանք ունեն տարբեր պահանջներ: Միեւնույն ժամանակ Մ. Նահանգները մերժել են Մոստարին օդանավերով օգնություն հասցնելու նպատակահարմարությունը, պատճառաբանելով տեղանքի ռելիեֆը: ՄԱԿ-ի բոսնիական պատվիրակը բողոքել է, որ չնայած ամերիկյան հիվանդանոցներից հարյուրավոր առաջարկներին, ՄԱԿ-ի բյուրոկրատիան դժվարացնում է օգնության մատակարարումը: Մինչդեռ Սարաեւոյում ՄԱԿ-ի էվակուացիոն խմբի ղեկավարի հայտարարությամբ, օգնության օդային կամուրջը վերածվել է քաղաքական ներկայացման: Այնուամենայնիվ, երեք օրվա դադարից հետո երկուշաբթի օրը վերսկսվեց օգնության մատակարարումը Ֆրանսիական, գերմանական եւ ամերիկյան ինքնաթիռներով:

## Նիգերիայի խորհրդարանը չհաստատեց նախագահին

Նիգերիայի նախագահ ընտրված գեներալ Իբրահիմ Բաբանգիդան Ազգային ժողովում իր ելույթի ժամանակ հայտարարեց, թե ցավում է իր ընտրության արդյունքները ժողովի կողմից չհաստատվելու կապակցությամբ: Նա ասաց, որ կարող է հրաժարվել նախագահությունից, եթե ինքն է հանդիսանում երկրում ժողովրդավարության հաստատման հիմնական խոչընդոտը: Մինչեւ ներկա ժամանակավոր անցումային կառավարությունը, 1985 թվականից Նիգերիայում իշխում էր գեներալի ղեկավարած ռազմական վարչակարգը: ԱՄՆ հույս հայտնեց, որ գեներալը իշխանությունը կհանձնի քաղաքացիական կառավարությանը մինչեւ օգոստոսի 27-ը:

## Սուդանը կմտնի «սեւ ցուցակի» մեջ

ԱՄՆ-ը մտադիր է Սուդանին մտցնել ահաբեկչությունը հովանավորող երկրների ցանկի մեջ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն մի քանի ամիս է Սուդանը չի պատասխանում արաբ ծայրահեղականների խմբերը իր երկիր ներթափանցելու մասին արված բազմակի հայտարարություններին: Այս դեպքում Սուդանը կզրկվի ԱՄՆ տնտեսական եւ ռազմական օգնությունից, իսկ ամերիկյան արդյունքներ ձեռք բերելու համար նրան անհրաժեշտ կլինի հատուկ թույլտվություն: Այս մասին որոշումը պետքարտուղարությունը կհայտնի մոտ օրերս: Միեւնույն ժամանակ, պետքարտուղարության խոսնակը ABC հեռուստաընկերության դիտողությունը ՄԱԿ-ի սուդանյան դիվանագետների եւ ահաբեկիչների կապի մասին չմեկնաբանեց, խորհուրդ տալով դիմել ՀՅԴ:

■

digitised by A.R.A.R.@

ԱԿՆ

# ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՍԱՆՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

## Կամ հաշվեսկություն լրագրողների առաջ

**Արտասահմանյան երկրներում հավատարմագրված 6 հայ դիվանագետներ երեկ արտգործնախարարությունում հանդիպեցին լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ: Դիվանագետների նմանօրինակ հավաքը Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանը բնութագրեց որպես «հաճելի անակնկալ եւ պատահականություն»:**

Սակայն, ինչպես հետո նշեցին դիվանագետներից մի քանիսը, նրանք օգտակար խորհրդակցություններ են անցկացնում ՀՀ նախագահի աղարտում եւ արտգործնախարարությունում, մշակում համատեղ ծրագրեր, վերլուծում իրենց աշխատանքը: Բացի այդ, աշխարհում ընդունված է, որ օգոստոս ամսին դիվանագետները գնում են արձակուրդ: Ինչեւէ, գլխավորն այն էր, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել անցած մեկ տարվա ընթացքում արտասահմանի եւ Հայաստանի հարաբերություններում, որքանով են մեր դիվանագետները փորձել օգտակար լինել իրենց վստահված աշխատանքում: Գաղտնիք չէ, որ կադրային նշանակումներ միշտ հիվանդագին ձեւով են ընկալվում եւ միայն աշխատանքն է, որ տալիս է յուրաքանչյուր նշանակման գնահատականը: Իհարկե, այդ կապակցությամբ ԱՄՆ-ում դեսպան Ռուբեն Շուգարյանը, Մեծ Բրիտանիայում դեսպան Արմեն Սարգսյանը, Ֆրանսիայում ժամանակավոր հավատարմատար Վահան Տեր-Ղեւոնդյանը, Սիրիայում ժամանակավոր հավատարմատար Դավիթ Հովհաննիսյանը, Եգիպտոսում ժամանակավոր հավատարմատար Էդուարդ Նալբանդյանը եւ Ղազախստանում ժամանակավոր հավատարմատար Արման Մելիքյանը այլ կարծիքի են: Ռուբեն Շուգարյանի ասելով, ամենեւին պարտադիր չէ, որպեսզի դեսպանատան առաջին դեմքը լինի պրոֆեսիոնալ, բեւեռ իմը նշանակվելուց առաջ հինգ տարի շարունակ աշխատել է արտաքին հարաբերությունների ոլորտում, նախագահի օգնականից մինչեւ մամուլի քարտուղար: «Ընդ որում, մամուլի քարտուղար լինելն ինձ համար ավելի դժվար էր, քան դեսպան», նշեց պրն. Շուգարյանը: Արմեն Սարգսյանի կարծիքով, Հայաստանի դեսպանների մեջ կան նաեւ պրոֆեսիոնալներ, այդ թվում Էդուարդ Նալբանդյանը, որն ունի 15 տարվա դիվանագիտական աշխատանքի փորձ (նախկին ԽՍՀՄ եւ Ռուսաստանի արտգործնախարարության շրջանակներում), Վիեննայում Հայաստանի դեսպան Արման Նախարարյանը: Ըստ Դավիթ Հովհաննիսյանի պնդմամբ, մյուսներն իրենց մասնագիտությունների կամ կյանքի փորձով այս կամ այն ձեւով առնչվում են արտաքին հարաբերություններին: Էդուարդ Նալբանդյանը նշեց, թե դիվանագիտությունը արվեստ է եւ կարեւորն այն է, որ արյան մեջ լինի դիվանագիտության ջիղը: Հավատարմատար Հայաստանի դիվանագետներին համեմատելով արտասահմանում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ներկայացնող դիվանագետների հետ, նշեց, որ մերոնք ավել բարձր մակարդակ ունեն:

Իհարկե, ինչպես պրն. Նալբանդյանն ասաց, դիվանագիտությունը նաեւ հնարավորությունների արվեստ է: Սակայն որքանով են այդ հնարավորություններն օգտագործվում: Դեսպանատների աշխատանքի ուղղությունները բաժանվում են մի քանի խմբի. Ղարաբաղյան հարցի կարգավորում, շրջափակման եւ մարդասիրական օգնության հարցեր, լրատվության միջոցների հետ աշխատանք: Հենց այստեղ էլ երեւում են կատարված աշխատանքի չափերը: Երբ ԱՄՆ-ում մեր դեսպանն անընդհատ հանդիպումներ է ունենում կառավարության, կոնգրեսի ու անհատ ներկայացուցիչների հետ, տալիս հարցազրույցներ, Հայաստան է ուղարկվում մեծ չափերի օգնություն, արդա Մեծ Բրիտանիայում կամ այլ կետում: Արմեն Սարգսյանի ասելով, անգլիացիներն սկսել են ակտիվորեն մասնակցել Ղարաբաղի հարցի կարգավորման ընթացքին, սեպտեմբերին նախատեսվում է բրիտանական խորհրդարանականների այց Հայաստան, բայց օգնության հարցերում ծավալները զիջում են ԱՄՆ-ին: Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանության համար մեծ խնդիր է հատկապես ուղարկվող օգնության տեղափոխման հարցը: Ի տարբերություն ԱՄՆ-ի, Բրիտանիան ոչ մի պետության փոխադրման օգնություն ցույց չի տալիս:

Սիրիան իր ունեցած հնարավորությունների սահմաններում ձմռանը 6 հազար տոննա հացահատիկ ուղարկեց, եւ այժմ էլ քննարկվում է վառելանյութ նվիրաբերելու հարցը: Ղազախստանը, ինչպես նաեւ միջինասիական երկրներն այդ առումով ավելի հիշ են լուսավորված, եւ հավատարմատար Արման Մելիքյանի ասելով, բավականին աշխատանք է տարվում կարգի հասցնելու համար: Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի, Ֆրանսիան այն երկիրն է, որը կարող օդակի դեր է կատարում Արեւմտքի եւ Հայաստանի միջեւ, ինչպես Մեծ Բրիտանիայում հավատարմատար Վահան Տեր-Ղեւոնդյանը, բացի ցույց տվող մարդասիրական օգնությունից, կարեւորում է նաեւ քաղաքական ջանքերը, ԵԱՀԽ-ում Ֆրանսիայի բռնած հայանպաստ դիրքը եւ հայ համայնքի դերը: Ընդհանրապես, դեսպանների կարծիքով, վերջին ժամանակներս բավականին փոխվել է Հայաստանի կերպարի ընկալումը: «ԱՄՆ-ում Հայաստանը չի ընկալվում որպես 3-րդ երկիր», ասաց Շուգարյանն ու շարունակեց, թե մենք ամենեւին լրատվական պատերազմը տանուլ չենք տալիս, այլ հավասարակշռում ենք, համագործակցում լրատվության միջոցների հետ: Իսկ Արմեն Սարգսյանի ասելով, Լոնդոնում, անգամ Ադրբեջանի դեսպանության բացակայության պայմաններում, հիմնականում լրագրողներն են: Բացի այդ, Լոնդոնում մեծ աշխատանք է տարվում Հայաստանի կերպարի ձեւափոխման ուղղությամբ, որպեսզի բացի շրջափակումից ու պատերազմից, ներկայացվեն նաեւ Հայաստանի անցյալն ու առագան: Ի դեպ, 1994-ի փետրվարի 7-ին նախատեսվում է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Մեծ Բրիտանիա:

Մի խոսքով, դիվանագետների տված հիմնական գնահատականն այն էր, որ թե Թուրքիայի կողմից ճանապարհների արգելափակման հարցը, թե մյուս բոլոր հարցերն առնչվում են Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ: Դժվար է ասել, թե այդ հարցում որ դեսպանն ինչպիսի աշխատանք է տանում, քանի որ դիվանագիտությունը նաեւ փակ գործ է, սակայն, ինչպես Ռուբեն Շուգարյանը նշեց, լինում են պահեր, երբ նրանք պարտավոր են իմքնուրույն եւ շատ որոշումներ կայացնել անկախ նրանից, թե ում երաժշտությունն են կատարում:

Ուստի գնահատականներ թեեւ կարելի է տալ, բայց դրանք ավելի լիարժեք կլինեն, երբ անցնեն տարիներ եւ հրապարակվեն դեսպանների կատարած աշխատանքները:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ

Բանակ

## Ավելի մեծ բաժին Կասպիականի նավթից

Ադրբեջանն ուզում է բոլոր եկամուտների 85 տոկոսը եւ հում նավթի դարաների հնարավորին չափ մեծ մասը իր սեփական վերամշակման գործարանների համար, Կասպից ծովի նավթահանքերի շահագործման արեւմտյան ընկերությունների հետ կնքած պայմանագրի շրջանակներում: Արեւմտյան գործընկերները հայտարարել են, որ Ադրբեջանի շահաբաժինը պիտի լիներ ավելի քան 70 տոկոս եւ առաջարկել են, որ արտահանվի արդյունահանվող հում նավթի կեսը: Ադրբեջանի նոր կառավարությունը, բանակցություններում ավելի կոշտ գիծ ընտրելով, ձգտում է մեծացնել ունակության 50 տոկոսով աշխատող նավթավերամշակող գործարանների մասնակարարման ծավալը: Վերամշակման ծավալներն ընկել են նավթի արդյունահանման նվազման, ինչպես նաեւ Ռուսաստանից եկող մասնակարարումների ծավալի անկման ճանապարհով: Օգոստոսի 13-ին Ոլորը գործակալությունը մեջբերեց ՏԱՍՍ-ի հետեւյալ հաղորդագրությունը. «Հարցությունը տնօրինողը հետ է-ինքը պայմաններ թելադրի հավանական գործընկերներին... Տեսակետը, թե նոր տակտիկան առավելագույն չափով առպահովել հանրապետության նավթավերամշակման գործարանների գործունեությունը, շարունակաբար եւ վճռականորեն քննարկվում է: Դա Ադրբեջանին թույլ կտար դառնալ իր սեփական նավթամթերքների գլխավոր արտահանողը: Նավթամթերքների գինը զգալիորեն ավելի բարձր է, քան նավթինը... Սակայն գլխավոր հետեւությունն այն է, որ բոլոր ստացված շահույթները պետք է բաժանվեն 85/15 տոկոս հարաբերությամբ Ադրբեջանի եւ արեւմտյան ֆիրմաների միջեւ»: Նավթի պոտենցիալ մեծ հարստություն ունեցող Գյուենշլի, Չիրագ եւ Ազերի նավթավայրերը շահագործելու համար ադրբեջանական իշխանությունները ինարկում են առաջարկությունների երկու փաթեթներ, որոնցից մեկը ներկայացվել է ռեսպանդենտներ, իսկ մյուսը արեւմտյան նավթային ընկերությունների կողմից: ՏԱՍՍ-ը նաեւ հաղորդել է, որ «ծանրաղուսային նավթավայրերը շահագործելու նախագծի վերջնական տարբերակում պետք է հաշվի առնվի Ադրբեջանի ներդրումը նրանց բացման եւ զարգացման գործում»:

Ոլորը

## Ադրբեջանի տնտեսության վիճակը ճգնաժամային է

Չնայած վերջին ժամանակներս արդյունաբերության որոշ ճյուղերում նկատվող կայունացման միտումին, ընդհանուր առմամբ Ադրբեջանի տնտեսական վիճակը մնում է ճգնաժամային: Շարունակվում է արտադրության եւ դրա հետեւանքով բնակչության կենսամակարդակի անկումը: Ադրբեջանի էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների համաձայն, ազգային եկամուտը անցյալ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 13 տոկոսով, համախառն արտադրանքի ծավալը կրճատվել է 10 տոկոսով: Շարունակվում է արտադրության անկումն այնպիսի առաջատար ճյուղերում, ինչպիսիք են նավթահանքայնը ու նավթաքիմությունը, ինչպես նաեւ հիմնական ու թեթեւ արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության մեջ: Վատացել է պարենավորման, մսի, կաթի, ձվի մթերման վիճակը 1992 թ. նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, կազմելով համապատասխանաբար 63, 73, 44 տոկոս: Շինարկությունների մեծ մասը չի կատարում պայմանագրային պարտավորություններ: Հանրապետությունը պակաս է ստացել 19 մի լիարդ ռուբլու պարենային արտադրանք: Միայն նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ առեւտրատնտեսական կապերի խզման հետեւանքով առաջին կիսամյակում արդյունաբերության կորուստները կազմել են 180 հազար մարդ: Հավանաբար ՍՊՀ հանրապետություններից մի քանի պատարների մասակարարումների դադարեցման պատճառով այդ թիվը կաճի երկրորդ կիսամյակում:

ՆՏ

Էջագիր

## Ֆրանսիացի փորձագետները Հայաստանում

Օգոստոսի 18-ին ՀՀ պետնախարար Գագիկ Մարտիրոսյանն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության շրջակա միջավայրի հարցերի նախարարության մասնագետներ Էրիկ Լեբուային եւ Դանիել Շասանյոնին, որոնք Եվրահանձնաժողովի կողմից գործուղվել են Հայաստան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու, սողանքների դեմ պայքարի, այդ բնագավառում կանխարգելիչ փորձագիտական աշխատանքներ կատարելու նպատակով: Ֆրանսիացի մասնագետներն արդեն եղել են Դիլիջանում եւ Սանահինի շրջանում, որտեղ ուսումնասիրել են սողանքների վիճակը, երկաթուղու եւ ավտոմայրուղու դրանց հարող հատվածները, մերձակա բնակավայրերը, ծանոթացել հայ մասնագետների աշխատանքներին:

Արտասահմանյան փորձագետների կարծիքով, հիշյալ շրջաններում սողանքի ակտիվացում կարող է տեղի ունենալ հորդառատ անձրեւների, անգամ փոքր ուժգնության երկրաշարժերի դեպքում: Ուստի անհրաժեշտ է կատարել կանխարգելիչ միջոցառումներ, մասնավորապես, շուրջ 1 մլն խորանարդ մետր հողային աշխատանքներ:

Ֆրանսիացի փորձագետները իրենց գործողության արդյունքների եզրակացությունը կներկայացնեն Եվրահանձնաժողովին եւ ինչպես հավատիացրին, բաս ամենայնի կեղտաստեն բնական աղետների դեմ պայքարի գործում Հայաստանին տեխնիկական եւ նյութական օգնություն ցույց տալու համար:

«Ազգ»

Փաստեր

## Հայերը փորձում են անցնել լեհ-գերմանական սահմանը

Տարվա սկզբից մոտ 170 Հայաստանի քաղաքացիներ են ձերբակալվել Լեհաստանի Շչեցին գավառում, երբ նրանք փորձում էին անօրինական կերպով անցնել լեհ-գերմանական սահմանը. օգոստոսի 12-ին հայտնեց սահմանապահ մի լեհ սպա: Վերջին ամիսներին հայերն ավելի հաճախ մեծ խմբերով են փորձել անօրինական մուտք գործել Գերմանիա: Նրանցից ոմանք, առանց նշելու իրենց անունները, պատճառաբանել են, որ իրենք խուսափում են իրենց երկրում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմից:

ՊԱՊ

**Օգոստոսի 18-ին տեղի ունեցավ հեռախոսազրույց Վրաստանի խորհրդարանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի եւ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ,** հայտնեցին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից: Է. Շեւարդնաձեն տեղեկացրեց Թուրքմենստան կատարած իր այցելության մասին: Երկու երկրների ղեկավարները պայմանավորվեցին, որ համատեղ ջանքերով կնպաստեն Վրաստանի եւ Հայաստանի բնականոն գազամատակարարմանը: Լ. Տեր-Պետրոսյանը բարձր գնահատեց Աբխազիայում կրակի դադարեցման մասին ձեռք բերված պայմանավորվածությունները: Զրույցի ընթացքում քննարկվեց նաեւ Վրաստանի երկաթուղով Հայաստան եկող բեռների տեղափոխման հարցը:

Հարցում

## Ո՞վ է մեղավոր հանդիպման ձախողման համար

**ԼՂՀ ներքին գործոց փոխնախարարը պարզաբանում է Թբիլիսիում հայ-ադրբեջանական չկայացած հանդիպման հանգամանքները**

Պրեսֆակտում գործակալությունը տարածել էր մի հաղորդագրություն, որտեղ վկայակոչելով Ադրբեջանի ռազմագերիների գործերի հանձնաժողովի նախագահ Աբասովի խոսքերը, նշվում էր, թե օգոստոսի 12-ին Ադրբեջանի եւ Հայաստանի ռազմագերիների գործերի հանձնաժողովների Թբիլիսիում նախատեսված հանդիպումը ձախողվել է Ղարաբաղի «հայ համայնքի» ներկայացուցչի մեղքով, որը որպես նախնական պայման պահանջել է «համայնքին տալ պետական կարգավիճակ»: Աբասովի խոսքերով, հայկական կողմի ցուցակներում նշված են 700 ռազմագերիներ, պատանդներ եւ անհետ կորածներ:

Նույնն տարածի բոլակիցը հնոսխոսով կարդվեց ԼՂՀ ռազմագերիների, պատանդների եւ անհետ կորածների գործերի հանձնաժողովի նախագահ, ԼՂՀ ներքին գործոց փոխնախարար Ալեքսանդր Աղասարյանի հետ եւ նրան խնդրեց մեկնաբանել այդ հաղորդումը: Ա. Աղասարյանի խոսքերով, հաղորդման մեջ նախ եւ առաջ խեղաթյուրված է ներկայացված հանդիպման բնույթը. Թբիլիսիում պետք է կայանար ադրբեջանական կողմի եւ ԼՂՀ-ի, ոչ թե Հայաստանի ներկայացուցիչների հանդիպում: Այդ հանդիպման անցկացման շուրջ համաձայնություն էր ձեռք բերվել ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպման ժամանակ, որը, ինչպես հայտնի է, տեղի էր ունեցել հուլիսի 28-ին, Մարտակերտի շրջանի սահմանի մոտակայքում: Հենց այնտեղ էլ համաձայնեցվել էր այն տեքստը, որի տակ պետք է ստորագրեին «Ադրբեջանի ներկայացուցիչը» եւ «Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչը»: Սակայն ավելի ուշ Աբասովը հրաժարվել էր իր ստորագրությունը դնել այդ տեքստի տակ, հայտարարելով, թե դա կնշանակի, որ իմքն ընդունում է «Ղարաբաղում պետության առկայությունը»: «Այդ ժամանակ ես, բնականաբար, հրաժարվեցի մեկնել հանդիպման, քանի որ դա կլիներ երկու մասնավոր եւ ոչ պաշտոնական անձանց հանդիպում: Մինչդեռ ես համոզված եմ, որ Աբասովը այդ խորամանկությանը դիմել է կանխամտածված, որպեսզի բացցնի Ադրբեջանում հայ պատանդների վիճակն իրոք վերահսկելու իր հանձնաժողովի անկարողությունը: Մեր զույգերի ժամանակ ես նրան քանիցս առաջարկել էի ներկայացնել իր վերահսկողության տակ գտնվող թեկուզ 10 հայ պատանդների ցուցակ: Ի պատասխան, ես խոստանում էի նրան ավելի մեծ թվով ադրբեջանցիների ազգանուններ: Նա ոչ մի կերպ չի պատասխանում այդ առաջարկություններին, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Ադրբեջանում դարաբաղցի բոլոր պատանդները գտնվում են մասնավոր անձանց մոտ», ասաց Ալեքսանդր Աղասարյանը:

ՆՏ

digitised by A.R.A.R.@

Սոցիալական

# ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՄ Է, ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ

**Հայաստանի խաղաղաշինների թիվը, ՀՀ վիճակագրության պետական վարչության տվյալներով, այս տարվա վեց ամիսների ընթացքում աճել է 15,6 հազարով եւ կազմել 3 մլն 737 հազար 700 մարդ: Հակառակ սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, շարունակվող շրջափակումներին, պատերազմական դրությանը, ծնվող երեխաների թիվը՝ 30,4 հազար, շարունակում է գերազանցել մահացածներին՝ 14,8 հազար:**

Սակայն չեն կարող չմտահոգել առջեւն օրինաչափության վերածվող միտումները՝ ծնելիության շարունակվող անկում, մահացության աճ եւ որոշես այս ամենի հետեւանք՝ բնակչության բնական աճի գործակցի փոքրացում: Համեմատության համար նշենք, որ 1988 թ. երկրաշարժից հետո այդ ցուցանիշը 11,3-ի էր հավասար, իսկ 1993 թ. առաջին կեսում հասել է 8,4-ի, երբ անցած տարվա նույն ժամանակամիջոցում դեռեւս 13 էր: Պարզ է նաեւ, որ այսպես շարունակվելու դեպքում հանրապետության բնակչության ընդհանուր թիվը 1994 թ. հենին շատ ավելի փոքր կլինի, քան ՀՀ 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով էր կանխատեսվում՝ 3 մլն 776 հազար:

Անդրադառնանք անհանգստացնող այլ ցուցանիշների եւս՝ 1993 թ. հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 10,4 հազար ամուսնություն եւ 1,4 հազար ամուսնալուծություն, ինչը համադրատական՝ 8,1 եւ 18,9 տոկոսներով դակաս է 1992 թ. նույն ժամանակահատվածի համեմատ: Սա արդեն ակնհայտորեն ցույց է տալիս, որ ընտանիքը լրջորեն հիվանդ է: Մի արդյունք, որի կանխանշանների գոյության մասին վաղուց էին զգուշացնում մասնագետները:

Իսկ ի՞նչ է արվում բուժելու ուղղությամբ: Կարող ենք վստահորեն արձանագրել, որ էական ոչ մի բան: Ցիրս է, վերջին ամիսներին որոշակի քայլեր են ձեռնարկվում՝ համակարգվում է մարդասիրական օգնության բաշխումը, երեխաներին տվող նպաստները կախվածության մեջ են դրվում ընտանիքների եկամուտների չափից, ստեղծվում է սոցիալական ծառայությունների համակարգ, բայց այդ ամենն ավելի շատ մահացողի կյանքը էլի ինչ-որ ժամանակով երկարաձգելու միջոցառումներ են հիշեցնում:

Իշխանությունները պարզապես զբաղվելով իրենք գոյություն ունեցող դժվարություններով, ըստ էության գործնական ոչինչ չեն անում ընտանիքներին կյանքի հիվանդությունները հասկանալու եւ դրանց բուժման համար քայլեր ձեռնարկելու ուղղությամբ: Դրա ամենացայտուն ապացույցներից մեկն էլ այն է, որ քաղաքական նոր ուժերն այդպես էլ ընտանիքի եւ ժողովրդագրության խնդիրներով զբաղվող պետական ոչ մի օղակ չստեղծեցին, թեեւ նման որոշում ՀՀ Գերագույն խորհուրդը վաղուց է ընդունել: Հավանաբար, նրանց թվում է, թե սննդի, հանապազօրյա հացի, վառելիքի հայթայթման գերհարցերն ընդհանրապես վերջին ոչան են մղել ամուսնությամբ եւ երեխաների ծննդով պայմանավորված բոլոր հիմնախնդիրները, իսկ այն, որ ամենուրեք սառեցվել, որ հեշտությամբ կդիմանան, մինչեւ բազմաթիվ հոգսերին վերջ տալուց հետո կարելի կլինի հանգիստ խղճով դրանց էլ անդրադառնալ:

Իսկ գուցե նրա՞նք են ճիշտ՝ ի վերջո եւ դարաբաղյան պատերազմը, եւ տնտեսական նոր հարաբերությունների անցումը նախեւառաջ ազգի եւ նրա յուրաքանչյուր անդամի հեռագա բարգավաճմանն են ուղղված, ու լավ օրերի գալու հետ միասին ամեն ինչ իր տեղը կընկնի:

Միայն թե աշխարհի մյուս երկրների փորձը միանգամայն այլ եզրահանգումների տեղիք է տալիս: Չէ՞ որ ամենենին էլ լավ օրից չէ, որ անհամեմատ բարեկեցիկ կյանքով ապրող եվրոպական պետությունները հրդեհային միջոցներ են կիրառում ծննդաբերության աննախադեպ անկումն առնվազն մեղմացնելու, իսկ Միացյալ ազգերի կազմակերպությունը, լրջորեն անհանգստացած ընտանիքների կայունությամբ եւ նրա հիմնական ֆունկցիաների կատարման վտանգվածությամբ դրությամբ, աշխարհի անխիր բոլոր ժողովուրդների ուշադրությունն ու ջանքերը համախմբելու համար դեռեւս 1989 թ. 1994-ն ընտանիքի տարի է հռչակել:

Ի վերջո, պակաս զբաղված լինելու հանգամանքով չի բացատրվում, որ Դաշնակցային Ռուսաստանի նախագահն ընտանիքի հարցերով խորհրդականի հատուկ ունի, իսկ այդ երկրի բոլոր մակարդակների գործադիր իշխանություններում ընտանիքի եւ ժողովրդագրական քաղաքականության խնդիրներով զբաղվող առանձին բաժիններ եւ վարչություններ են ստեղծվում:

Այնինչ մեզ մոտ հասարակության հիմնական բջջին առնչվող շատ ավելի հիմնահարցեր են կուտակված եւ շարունակվում են կուտակվել: Ամբոխները, ընտանիքի եւ հասարակության այսպես ասած ավանդական հակադրություններին այսօր ավելացել են երկրաշարժի եւ դարաբաղյան դայլարի հետեւանքով որբացած եւ ծնողազուրկ դարձած բազմահազար երեխաներին սոցիալականացման, շուկայական հարաբերություններին անցնելու հետ կապված արժեքների փոփոխման եւ դրա հետեւանքով սերունդների միջեւ առաջացած հակասությունների հաղթահարման, նյութական շահի ու հայրենասիրության միջեւ առաջացող անջրդեսի վերացման եւ բազմաթիվ այլ խնդիրներ, առանց որոնց լուծման ոչ մի պետություն լիարժեք գործել եւ շնչել չի կարող:

Փաստ է նաեւ այն, որ մենք ընտանիքի հարցերով խորությամբ զբաղվող ոչ միայն պետական, այլեւ գիտահետազոտական մարմիններ չունենք: Ըստ էության, համապատասխան մասնագետներ նույնպես չկան: Իսկ առանձին անձինք, որոնք այսօր այս կամ այն չափով ի վիճակի են այդ բեռն իրենց վրա վերցնել, համընդհանուր անուշադրության պայմաններում ստիպված այլ գործերով են զբաղվում:

Եւ այնուամենայնիվ, ներկա դրությամբ մտահոգողն անորոշությունն է, ոչ ոք չի կարող ասել, թե նման անհոգ մտայնությունը դեռ որքան կշարունակվի:

ՀՈՒՍԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Երեւան

## Աստղադիտարանը աղաղակում է հոգատար ձեռքի

Ղուկաս Ղուկասյանի անվան այգում գտնվող աստղադիտարանը 30-ական թվականներին Ալ. Թամանյանի նախագծով կառուցված գեղեցիկ շինություններից է: Այն որպես աստղադիտարան գործում է ավելի քան 60 տարի: Երեւանի պետական համալսարանի աստղադիտարանի տնօրեն, համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի դոցենտ Միշա Ղազարյանը հայտնեց, որ Բյուրականի աստղադիտարանի հիմնադրումից առաջ Հայաստանում բոլոր աստղաֆիզիկական գիտական ուսումնասիրությունները կատարվել են այնտեղ, մասնավորապես ճնշության են առնվել փոփոխական աստղերը: Հետագայում գիտական բոլոր ուսումնասիրությունները տեղափոխվեցին Բյուրական, իսկ Երեւանի աստղադիտարանը կիրառվեց բացառապես ուսումնական նպատակներով: Համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի ուսանողները այս աստղադիտարանում անցկացնում են իրենց դրակտիկան, որի մեջ մտնում են գործնական աշխատանքներ, տարբեր երկնային մարմինների, Արեգակնային համակարգության մոլորակների եւ նրանց արբանյակների, Լուսնի եւ Արեգակի դիտումներ: «Մեր դոնորը բաց են Աստղային երկնքով բոլոր հետաքրքրվողների առաջ, ցավոք, միայն դակասում են պետական հոգատարությունն ու օժանդակությունը, քանի որ երբենն գեղեցիկ կառույցը վերանորոգման խիստ կարիք ունի», ավելացրեց Ղազարյանը: ԼՏ

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Երեւանի հատուկ մասնագիտացված բժշկական ուսումնարանը շարունակում է 1993-94 ուս. տարվա ընդունելությունը բուժքույրական, մանկաբարձական եւ դեղագործական բաժիններում: Ուսումը վճարովի է, ուսման տեւողությունը երկուից մինչեւ երկու տարի վեց ամիս է:*

*Քննությունները՝ հայոց լեզու (գրավոր), քիմիա եւ կենսաբանություն:*

*Հասցեն. Երեւան, Բաղրամյան դող. 59ա, թիվ 78 դոդոց:*

*Հեռ. 22.58.27*

*Ուսումնարանի վարչական խորհուրդ*

Գորիս

## Սահմանամերձ գյուղի ձեռնարկությանը պետական աջակցություն

Շինուհայրը Գորիսի երջանի սահմանամերձ եւ ամենաաշխույժ բնակչություն ունեցող գյուղն է: Այստեղ է գտնվում Հայաստանում եզակի սեփական կոշկեղենի գործարանը, որն 800 աշխատատեղերով ապահովում է ոչ միայն սեփական, այլեւ հարեւան՝ Խոտի, Հալիձորի, Գորիս երջկենտրոնի բնակիչներին, բանգաղթյալներին: Սովորական դարձած իմ այն հարցին, թե որ ամսից է սկսել աշխատել ձեռնարկությունը, տնօրեն Ուլբիկ Ալեքսանյանը պատասխանում է.

«Մեր ձեռնարկությունը կանգ չի առել: Շմեռվա ընթացքում հիմնական արտադրանքով՝ մարզական կոշիկներ չենք արտադրել, կարված ճանապարհների, վառելիքի հետ, բայց դարտասխանատվությունը 800 աշխատողի նկատմամբ դարտավորեցրել է մեզ ժամանակավորապես թողարկել այլ արտադրանք՝ մանկական հագուստ: Մեր աշխատողը կարողացել է կերակրել իր ընտանիքը:

Մարիից կրկին անցել ենք մեր հիմնական արտադրությանը: Գործարանն այսօր արտադրում է 10 տոիական արտադրատեսակ՝ տղորական, կենցաղային եւ այլ տիպի սեփական կոշկեղեն, որն իր որակով, տեսքով համադրատական է միջազգային ստանդարտին: Մոդելները իսալական են, որ ձեզ ենք բերում Մոլդովայից: Պահանջարկն անսահման մեծ է: Հունիսից արտադրել ենք 50 հազար զույգ կոշիկ կամ 200 միլիոն 800 հազար առուրլու արտադրանք: Շատ շուտով կարտադրենք նաեւ երկարաճիտ կոշիկներ:

Ձեռնարկությունում օրվա մեջ կուտակվում է մեկ տոննա թափոն: Նրանից դարտրատում են տարբեր գույների սեփական սալիկներ, լողափազանի մաշիկներ: Քանի որ այժմ արտադրում ենք նաեւ մանկական հագուստ, թափոնը կօգտագործվի հագուստի մեջ, որպես դեսպ:

Վերջերս մեր ձեռնարկությունում էր Իրանի ներկայացուցիչը: Նրա հավանությանն արժանացան մարզական 7 կոշիկների նմուշներ, եւ դարտանագիր կնքելու առաջարկ արեց»:

Սահմանամերձ գյուղում բացում դժվարություններ հաղթահարելով աշխատում է սեփական կոշկեղենի գործարանը: Եւ տնօրեն Ուլբիկ Ալեքսանյանի բախտեսական ծրագրերում հարգական է կանգնում. «Ինչու մենք Երեւանում դետք է կոտ հայթայթենք, որը, հայտնի է, ինչ ճանապարհներով, է ձեզ բերվում: Երեւանում կոտ արտադրող ձեռնարկություններ կան, դեսական մակարդակով ֆոնդ իջեցնեն, մենք էլ ստանանք, դրծնենք «կոտ փախցնելու» ցանից: Անեն ինչ լավ կլինի, եթե դետությունը աջակցի մեզ, հատկապես սահմանամերձ գյուղերի ձեռնարկություններին»: Իսկ գործարանը հունվարից սկսած դետական բյուջե է մուծել 7 միլիոն 599 հազար 600 առուրլի: Ասել է, թե «տալ առանց դահանջելո՞ւ դետական աջակցություն»:

ՀԱՍՄԻԿ ԲԱԲԱՅԱՆՅԱՆ

Մեր սեփ. թղթակից, Գորիս


ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայկական ծրագիր ընկերությունն առաջարկում է հաշվապահության աշխատանքների ավտոմատացման «ՀԾ-Հաշվապահություն 2.0» փաթեթը:

Այն սպասարկում է հաշվապահության բոլոր բաժինները, բոլոր հաշիվները, բոլոր հաշվեկշիռները:

«ՀԾ-Հաշվապահություն 2.0» փաթեթը կազմված է հետեւյալ ծրագրերից.

- Գլխավոր գիրք- Բալանս
- Դեբիտորների հաշիվներ- Արտադրանքի իրացման հաշվառում
- Կրեդիտորների հաշիվներ- Մատակարարման հաշվառում
- Դրամարկղի- Բանկի գործողություններ
- Աշխատավարձի հաշվարկ
- Հիմնական միջոցների հաշվառում
- Պահեստ

Հասցեն՝ Տերյան 57

Հեռ. 252463, 254758, 584545


Դպրոց

## Նոր դասագրքեր ու հին ցավեր

Հայաստանի գիտնականներն առանձնահատուկ ոգեւորությամբ չեն արձագանքում հայկական դպրոցի դասագրքի ստեղծման գործին: Պատճառը դրա դիմաց վճարվող չափազանց փոքր հոնորարն է, որը չի կազմում գրքի արժեքի անգամ 1 տոկոսը: Հանձնարարությամբ, Հայաստանում նոր դասագրքեր ստեղծվում են:

ՀՀ լուսավորության նախարարությունը նախատեսել էր այս ուսումնական տարում դպրոցն ապահովել 60 անուն դասագրքով: Դրանից ութը՝ վերահրատարակվելիք, 52-ը նոր դասագրքեր են:

5-8 դասարաններում ուսուցվող հասարակական գիտության դասագրքերը ժամանակին ավարտին չեն հասցվել հեղինակային խմբերի կողմից, ըստ այդմ, վերահրատարակվում են այդ ապարկայի «հին» դասագրքերը:

Իսկ ազգագիտության դպրոցական նոր դասագիրքը, որը հեղինակել են հայ մասնագետները, դարտադրվում է վճար բաժանելու դպրոցներին (գիրքն արդեն տպագրված է):

Վերահրատարակվելու է նաեւ նախորդ տարվա Աշխարհագրությունը, քանի որ, ըստ նախարարության գնահատականի, ներկայացված 6 նոր Աշխարհագրությունները ոչնչով չեն գերազանցում նախորդին: Հավանաբար այս տարի եւս կիրառարվի Աշխարհագրության, մայրենիի ու հայոց պատմության դասագրքերի մրցույթ:

Այնուամենայնիվ, երբ ուսումնական տարվա մեկնարկին հասված օրեր են մնացել, դեռեւս տպագրված է 17 անուն դասագիրք: Լուսավորության նախարարության դպրոցների գլխավոր վարչության ծրագրամեթոդական բաժնի պետ Հանդես Կարապետյանը հայտնում է, որ գրեթե ամեն օր դասագիրք է տպագրվում, եւ հուսով է, որ մինչեւ սեպտեմբերի 1-ը հրատարակված կլինի դպրոցական դասագրքերի լրիվ անվանացանկը, մինչդեռ հանրապետությունում չափազանց լուրջ է թղթի, էլեկտրաէներգիայի եւ փոխադրամիջոցների խնդիրը:

Կառավարության տրամադրած 300 մլն ռուբլի օժանդակությունն այսօր արդեն բավարար չէ դասագրքերի գինն էապես իջեցնելու համար, իսկ տպագրական թղթի արժեքն օրեցօր ավելի ու ավելի մեծ «ոստյուններ» է գործում: Բացի այդ, դասագրքի գնի 20 տոկոսը հատկացվում է «Հայգրքին», որն իրականացնում է դրա առաքումը:

Հանդես Կարապետյանն այն կարծիքին է, որ դասագրքաստեղծ ամբողջ աշխատանքը՝ ստեղծում, հրատարակում, իրացում, պետք է հանձնարարի լուսավորության նախարարությունը, քանի որ դասագիրքն ստեղծելու եւ դպրոցներին հասցնելու գործում ամենաբահագրգիռ կողմն է: Այս դեպքում գիրքը, շրջանցելով գրախանութն ու սեւ շուկան, կմտնի ուղիղ դպրոց:

Ի դեպ, առաջին հրատարակված դասագրքերի գինը 150-200 ռ. է: Առաջիկա գրախանութում... Ռ. Խ.

### Ուսադրություն

*Երեւանի դասական փորձաքննությունների առոնագրված ինստիտուտի հրավարանական բոլեջը 1993-94 ուս. տարվա համար հայտարարում է ընդունելություն:*

*Ուսման տեւողությունը երկու տարի 10 ամիս է, ուսումնառությունը վճարովի է: Իրավաբանական բոլեջը տեղավորված է Աշտարակի թիվ 56 տեխնիկական ուսումնարանում (շուկայի մոտ):*

*Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել 2.52.73 (Աշտարակ) եւ 22.58.27 (Երեւան):*

*Ուսումնարանի վարչական խորհուրդ*

### Հրավիրում ենք սովորելու

Երեւանի դասական փորձաքննությունների առոնագրված ինստիտուտը հայտարարում է 1993-94 ուս. տարվա ընդունելություն, իրավագիտություն մասնագիտությամբ: Ինստիտուտի շրջանավարտները ստանում են նաեւ դասական փորձագետի մասնագիտացում: Ուսումը վճարովի է, ուսման տեւողությունը՝ 5 տարի:

Դիմումներն ընդունվում են մինչեւ օգոստոսի 31-ը, քննությունները՝ հայոց լեզվից (գրավոր) եւ հայ ժողովրդագրությունից:

*Հասցեն՝ Սոչայի տուն, թիվ 20,*

հեռ.

22.58.27, 53.08.37 եւ 58.05.12

## «Արամ Խաչատրյան» համերգասրահի նոր համերգաշրջան

**1993-1994 թթ. համերգաշրջանում «Արամ Խաչատրյան» համերգասրահում Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ Երեւանի սիմֆոնիկ նվագախմբի ելույթներին զուգահեռ տեղի կունենան մենահամերգներ եւ կամերային երաժշտության համերգներ՝ լավագույն մենակատարների եւ կամերային համույթների մասնակցությամբ: Համերգաշրջանի ղեկավարությունն իրագործում է Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ Երեւանի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Չկնավորյանը: Համերգաշրջանի հովանավորն է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:**

**Գերմանական, ճապոնական, ավստրիական, իրանական եւ այլ երկրների երաժշտության փառատոներ, կոմիտասի ծննդյան 125-ամյակին նվիրված «Աշխարհը եւ մենք» ամառային փառատոն, Չայկովսկու մահվան 100-ամյակը եւ Ռախմանինովի մահվան 50-ամյակը նշող համերգներ, դպրոցականների համար հեռատրիր համերգաշար, համերգներ դպրանի օժտված երաժշտների մասնակցությամբ՝ այդպիսին է համերգաշրջանի հագեցած ծրագիրը:**

«Արամ Խաչատրյան» համերգասրահի տեղեկատվական կենտրոն

digitised by A.R.A.R.@

Կոմենտար

# Հայկական եւ ռուսական դպրոցներ

«Ազգի» օգոստոսի 10-ի թում տպուած էր հարցազրոյց ռուսական մշակոյթի «Հարմոնիա» կենտրոնի նախագահ դրն. Վլ. Միխայլովի հետ: Հաւանաբար, հարցազրոյցը կատարուել է ռուսերէն, առյա թարգմանուել: Ռուսերէն *ռուսկոյազիչնի* բառը սխալ թարգմանուած է *ռուսախօս*: Պէտք է թարգմանուէր *ռուսալեզու*: Հայերէն, սովորաբար, *ռուսախօս* ասում են իրենց ազգային լեզուն չիմացող կամ վատ իմացող հայերին, որոնք վարժ են ռուսաց լեզուին եւ գերադասում են խօսել ու գրել ռուսերէն: Այդպէս ունենք նաեւ *ֆրանսախօս, անգլախօս*, որոնք նոյնպէս իրենց ազգային լեզուին խորթացած հայերին է վերաբերում:

Ասում ենք *ռուսախօս հայ*, բայց չի կարելի ասել *ռուսախօս ռուս*, քանի որ ռուսի բնականոն վիճակը հենց ռուսախօս լինելն է: Հայի համար ռուսախօս լինելը բնականոն վիճակ չէ:

Հարցազրոյցում խօսքը պէտք է վերաբերեր Հայաստանի ռուսալեզու բնակչութեանը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ «ռուսալեզու բնակչութիւն» անուանումը ծագել է գլխաւորապէս Մերձաւորեան կամ միջինասիական երկրների առնչութեամբ: Բայց այդ երկրներում տեղացիներից դէնս են ռուսալեզու եւ չեն մտնում ռուսալեզու բնակչութեան կազմի մէջ: Այդ բնակչութիւնը բաղկացած է ռուսերէն հաղորդակցուող ոչ բնիկ տարբեր ազգերի անհատներից: Հայաստանում վիճակը բոլորովին այլ է. այստեղ ռուսալեզու բնակչութեան մեծ մասը հայեր են, ռուսախօս հայեր: Ընդ որում ոչ միայն փախստականներ, այլեւ բազմաթիւ հայաստանցիներ, որոնք ռուսական կրթութիւն են ստացել, ընտանիքներում ռուսերէն խօսել եւ հայերէն կամ չգիտեն, կամ վատ գիտեն:

Ռուսական մշակոյթի կենտրոն, անշուշտ, պէտք է դիտարկի Հայաստանի ռուս բնակչութեան շահերը: Ես էլ սիրով կմիանամ նրան: Սակայն այդ կենտրոնը հազիւ հիմք եւ իրաւունք ունենայ իր տեսակետով «դիտարկելու» Հայաստանի հայ բնակչութեան լեզուական «շահերը»:

Եթէ հայ մարդը ադազգայնացած է եւ բնակւում է իր հայրենիքում, առյա նրա ազգային շահերը ուշադրութեան դարձնելու նշանակում է նրան վերահայացնել, իսկ եթէ դա արդէն հնարաւոր չէ, նրա զաւակներին հայ մեծացնել կրթելով հայալեզու դպրոցում: Մինչդեռ մեծարգոյ դրն. Միխայլովի խօսքերից երեւում է, որ ադազգայնացած հայերի շահերը դիտարկել, ըստ նրա, նշանակում է ամէն կերպ ընդառաջել նրանց ադազգայնութեանը, ամրապնդել նրանց հայերէնին խորթացած լինելը: Տարօրինակ է:

Հայաստանից դուրս բնակչութեան եւ ռուսախօս հայերի փախուստի գլխաւոր դատապարտեալներից մէկը նա համարում է, իր խօսքերով ասած, *«ռուսական դպրոցների չմտածուած կտրուկ փակումը, ռուսաց լեզուի կիրառման դադարի զգալի նեղացումը»*: Բնաւ ճիշտ չէ: Երեւում է, որ դրն. Միխայլովի վրայ ազդել է ադազգայնացած հայերի քարոզչութիւնը:

Նախ՝ Հայաստանում ռուսական դպրոցներ չեն փակուել: Այստեղ ռուս երեխաները սովորում են ռուսական դպրոցներում, նրանց համար իրենց ազգային լեզուով կրթուելու բոլոր դայմանները ապահովուած են օրէնքով: Իսկ ինչո՞ւ այս նախնական լոմն է մեծարգոյ նախագահը: Չէ՞ որ շատ երկրներում, այդ թում նորոգական, ռուս երեխաները զրկուած են իրենց ազգային լեզուով կրթուելու հնարաւորութիւնից: Հայաստանում այդ հնարաւորութիւնը լիակատար է: Պէտք չէ սա մոռացութեան տալ: Ինչ վերաբերում է հայ երեխաներին, առյա միանգամայն տրամաբանական որոշում է կայացուել՝ նրանց եւս կրթել իրենց ազգային լեզուներով: Եւ Հայաստանի ռուսական դպրոցներում սովորող մոտ 100 հազար հայ երեխաների «բանակը» ասիճանաբար, շատ դանդաղ (եւ ոչ թէ կտրուկ ու չմտածուած, դրն. Միխայլով) սկսեց նուազել: Այս գործընթացը դեռ աւարտուած չէ: Ոչ մի դպրոց չի փակուել, ռուսական դպրոցների մի մասը ասիճանաբար հայացում է:

Հետաքրքրական է հարցնել դրն. Միխայլովին՝ ինչո՞ւ Ռուսաստանի անխտիր բոլոր ռուս երեխաները պէտք է կրթուեն իրենց ազգային լեզուով, իսկ Հայաստանի հայ երեխաներին պէտք է զրկել այդ իրաւունքից: Աւելին, ինչո՞ւ Հայաստանի ռուս երեխաներն իրաւունք ունեն կրթուելու իրենց ազգային լեզուով, իսկ նոյն Հայաստանի հայ երեխաներին պէտք է զրկել այդ իրաւունքից՝ նրանց ադազգայնացած, քաղաքի ծնողների դպահանջով: Ո՞ւր է տրամաբանութիւնը:

Լեզուի կիրառման դադարի մասին: Հայաստանում հայոց լեզուն դեռեւս հեռու է, իրօք, պետական լինելուց, քանի որ շատ հիմնարկներում գրագրութիւնը շարունակում է ռուսերէն տարուել: Դրն. Միխայլովն, ըստ երեւոյթին, աւելին է ուզում, երեւի՝ հայերէնի էլ ավելի դուրս մղում մեր ներքին գրագրութիւնից: Դարձեալ հարցնենք նրան՝ ինչո՞ւ քան Ռուսաստանում ներքին գրագրութիւնը պէտք է տարուի միայն ռուսերէն, այսինքն ազգային լեզուով, իսկ Հայաստանում չդէտք է տարուի միայն տեղի ազգային լեզուով, այլ պէտք է գերիշխի այլ ժողովրդի լեզուն: Կա՞յ տրամաբանութեան ու տրամաբանութեան նշոյլ:

Առաջարկում է նաեւ հայկական դպրոցների մի մասը դարձնել երկլեզուեան՝ ռուսերէն-հայերէն: Մենք դրա փորձն էլ ունենք: Այդպիսի երկլեզուեան դպրոցներ շատ արագ վեր են ածում ռուսական դպրոցների՝ մասնակի հայկական թեքումով: Դա ծուղակի դէս բան է՝ ընդդէմ հայ երեխաների հայկական կրթութեան:

Երեւում է, որ հարցազրոյց վարող հայուհին համերաշխւում է դրն. Միխայլովի հետ: Զարմանում ես՝ ո՞ւր է ազգային արժանապատուութիւնը:

Արդ, ինչո՞ւ են Հայաստանից փախչում ռուսները, այդ թում մոլոկանները: Դա շատ ցաւալի երեւոյթ է: Բայց փախչում են նաեւ ատրիները, յոյները: Սա նոյնպէս շատ ցաւալի է: Մանաւանդ փախչում են հայերը եւ ոչ միայն ռուսախօս, այլ ամենից աւելի, զանգուածաբար՝ հայախօսները: Սա ազգային ողբերգութիւն է: Պատճառը մէկն է՝ Հայաստանի աղետալի վիճակը: Մարդիկ լաւ հեռանկար էլ չեն տեսնում: Ամէնը գռբ է: Անցեալ դժոխային ձմեռը «ճաշակող» մարդը եթէ չնչին հնարաւորութիւն ունի Հայաստանից փախչելու, փախչում է: Քանի որ գիտի՝ եկող ձմեռն աւելի դժոխային է լինելու, մահահոս: Ուրիշ դատճառ չկայ փախուստի:

Զարմանալի է նաեւ, որ դրն. Միխայլովը ոչ մի խօսք չի ասել այն մասին, որ հայ ժողովուրդը սիրով է վերաբերում տեղի ռուսներին, որ նախկին ԽՍՀՄ ազգային որեւէ տարածքում ռուս բնակչութեան նկատմամբ այնպիսի յարգանք չկայ, ինչպիսին կայ Հայաստանում: Կարծեմ այդ մասին խօսելն էր իր դատասխանատուութիւնը եւ ոչ թէ հայերի ադազգայնացման դատճառները:

Գաղտնիք չէ, որ հայերիս մի մասը բնաւ նախանձախնդիր չէ իր ազգային լեզուին եւ կրթութեանը: Օտարամոլութիւնը խարխլում է մեր ազգի հիմքը: Քիչ չեն հայերը, որոնք մեր հանրադետութեան լեզուական օրենսդրութեան մէջ ադանգներ են որոնում հայ երեխաներին զրկելու ազգային լեզուով կրթուելու իրաւունքից: Եւ յաջողում են: Հակառակ լեզուի գործող օրէնքի, երեւանում անգլալեզու ուսումնական հաստատութիւններ են ծաղկում, դատրաստում են բացել ռուսական գիմնազիա հայերի համար, մասնաւոր բուհերում շատ հայեր ռուսական բաժիններում են սովորում: Դրանց գումարէք Հայաստանը հեղեղած ռուսերեն թերթերը:

Առանց ազգային լեզուի բացարձակեցման որեւէ երկրում չի կարող լինել ազգային անկախութիւն: Դա այսօր չկայ նաեւ Հայաստանում: Այնպիսի ադազգայնացում, որպիսին կայ Հայաստանում, երբեւէ չի եղել ու չկայ Ռուսաստանում: Ռուսը գիտի յարգել իր ազգային լեզուն ու կրթութիւնը: Հիմա հայերի մէջ շատ են խօսում ռուսախտութիւնից, եթէ անկեղծ են, թող ռուսներից ընդօրինակեն սեփական ազգային լեզուին ու դպրոցին նուիրուած լինելու յատկութիւնը, օգնեն մեր ազգային լեզուն Հայաստանում բացարձակ դարձնելուն:

Պրն. Միխայլովը կարող է հանգիստ լինել. Հայաստանում ռուսների համար նրանց ազգային լեզուով դպրոցների դռները միշտ բաց կլինեն: Նա իրաւունք ունի նաեւ դայքարելու, որդեզի հայաստանաբնակ ռուսներն իրենց թերթն ունենան (Հայաստանում լոյս տեսնող մոտ 40 անուն ռուսալեզու թերթերը հրատարակում են հայերը եւ հասցէագրում հայերին): Ինչ վերաբերում է հայերին ազգային լեզուով կրթելուն եւ մեր ներքին գրագրութեան լիակատար հայացմանը, ուսի եւ հայերի մի մասի օտարամոլութեան դէմ կռուելուն, առյա գուցէ դրն. Միխայլովը օգնի մեզ այդ գործում հրաժարուելով ադազգայնացածների քարոզչութիւնը լսելուց:

Միանգամայն ճիշտ էր Հայաստանի ԳԽ-ի ընդունած օրէնքն ի դատասխանութիւն հայոց լեզուի իրաւունքների: Ճիշտ էր նաեւ լեզուի տեսչութիւն ստեղծելու յանձնարարականը: Այդ տեսչութիւնը դէտք է Հայաստանում բացարձակեցնի մեր մայրենին եւ նրանով հայ երեխաներին ու դատանիներին կրթելը, դէտք է կոխվն ուժեղացնի հայոց ամենայոռի յատկութեան՝ ծառայութեան դէմ: Սակայն օրէնքը ստորագրելու օրից անցել է 4 ամիս, իսկ տեսչութիւնը չկայ ու չկայ:

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

Բիզնես

# Ֆյուչերսային գործարքներ. Խաղ գների տարբերության վրա

Զարգացած շուկայական էկոնոմիկայում կարեւոր նշանակություն ունի գնային տեղեկատվությունը, որը խիստ անհրաժեշտ ուղղորդիչներ է տալիս արտադրողներին եւ սպառողներին:

Սակայն ցանկացած տնտեսական մոդելի դեպ ազատ գնագոյացման համակարգը եւս զուրկ չէ արատներից: Այդ համակարգի ամենատկան թերությունը կտրուկ եւ ոչ միշտ կանխատեսվող գների տատանումն է: Օրինակ, բավական է ներկայացնել գների դինամիկան նավթի համաշխարհային շուկայում 70-90 թթ.: Էներգետիկ ճգնաժամը (1974-1975 թթ.), ՕՊԵԿ-ի հաղթականությունը, խոանա-իրանյան դատերազմը, ճգնաժամը Պարսից ծոցում այդ դինամիկան դարձրին թռիչքաձեւ, սուր աճի եւ անկման շրջաններով: Նավթի համաշխարհային գների օրինակը վկայում է, որ շուկայի մասնակիցների համար կարեւոր է դատկերացում ունենալ գների դինամիկայի մասին գոնե կարճաժամկետ հեռանկարում, եւ ամենաարժեքավորը նրանց համար անգուշակելի գների տատանումներից ադահովագրվելու հնարավորությունն է: Իսկ այդդիսի հնարավորություն է տալիս ֆյուչերսային դայմանագրերի բորսային շուկան:

Էվոլյուցիան ադրանքային շուկայում բերեց այն բանին, որ բարսան ասիճանաբար խրական ադրանքի վայրկենական առաքման գործարքներից անցավ, այսդես ասած, ֆորվարդային դայմանագրերի, երբ ադրանքը առաքվում է որոշակի ժամանակահատվածում: Օրինակ, ֆերմերը եւ ալրադացը գարնանը գործարք են կնքում աշնանը ցորենի առաքումների համար: Սա որոշակի երաշխիքներ է տալիս դայմանագիր կնքող երկու կողմերին էլ:

Ֆյուչերսային դայմանագրերը տարբերվում են ֆորվարդայիններից նրանով, որ դրանք առավելագույնս ստանդարտավորում են մասակարարվող ադրանքների որակով, քանակությամբ, դայմաններով եւ առաքման ժամկետներով: Ժամկետայինների (ֆյուչերսայինների) գոյանալը, որոնք ադրանքի առաքումը դիտի կատարեն որոշակի ժամկետ անց (ասենք ԱՄՆ-ի 1000 դոլարի վաճառքը հոկտեմբերի սկզբին), հնարավորություն է տալիս կողմնորոշվել գների դինամիկայի ադատումների մեջ: Դոտենցիալ տարադրամ վաճառողները եւ գնորդները ձեռք են բերում դոլարի կուրսի անբարենդաստ տատանումներից ադահովագրվելու հնարավորություն, ֆիքսելով այն գործարքի մեջ ֆյուչերսային դայմանագրով:

Ռուսաստանում ֆյուչերսային շուկան իր առաջին քայլերն է անում միայն: Սակայն այսօր արդեն իրականում գոյություն ունեն տարադրամի եւ նավթի ֆյուչերսային շուկաներ: Թեեւ նավթի դայմանագրերի առեւտուրը դեռ շատ վիճաբանություններ եւ տարածայնություններ տեղիք է տալիս: Կայուն կարելի է համարել առայժմ թերեւս միայն վալյուտային շուկան:

Այսօր ԱՄՆ-ի դոլարների ֆյուչերսային դայմանագրերով առեւտուրն իրականացվում է Ռուսաստանի մի քանի բորսաներում: Ոմանք դատրաստվում են լայն բաշի հաղորդել դրան, սակայն առայժմ անվիճելի առաջատարը Մոսկովյան ադրանքային բորսան է:

Ֆյուչերսային դայմանագրերը մյուս կողմից հնարավորություն են ընձեռում նաեւ սպեկուլյատիվ գործառություններ զարգացման համար: Դայմանագրի ստանդարտացումը, որով գնում է առեւտուր, ստեղծում է բազմիցս նույն գործարքի վերավաճառքի հնարավորություն: Իզուր չէ, որ ֆյուչերսային դայմանագրերի հիման վրա առաքումներով է եզրափակվում գործարքների ընդհանուր թվի 5 տոկոսից ոչ ավելին:

Գների տարբերության վրա խաղը արագ հարստացման հնարավորություն է տալիս: Սակայն, մյուս կողմից էլ հարստացման հնարավորությունը դատահանջում է վալյուտային եւ ֆյուչերսային կուրսի վարքագծի վերլուծության անհրաժեշտություն: Կարելի է ասել, որ ֆյուչերսային շուկան խաղ է իր կանոններով, ներհատուկ յուրահատուկ խաղին ուղեկցող կրքերով եւ վերլուծական մտածողության անհրաժեշտությամբ:

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ՄԱՐԱՏ ԲԵԿՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐՎԱԾ
«ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է
1993-94 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոր տիպի համալսարանը հիմնված է մշակութաբանական համակարգային էվոլյուցիոն սկզբունքների վրա, որը ենթադրում է նրա ներառումը ազգային եւ համամարդկային գոյատեւողության ծրագրի մեջ:

1. Ժողովրդագիտության եւ լինգվոերկրագիտության ֆակուլտետ.
   ա) հայագիտության (15 տեղ)
   բ) անգլիագիտության (15 տեղ) Վ. Վ. Կատարեանցի անվան,
   գ) ամերիկագիտության (15 տեղ) եւ
   դ) իրանագիտության (15 տեղ) եւ
   ե) կրոնագիտության (15 տեղ) բաժիններ:
2. Միջազգային հարաբերությունների (դիվանագիտության) ֆակուլտետ (25 տեղ).
   ա) իտալական երկրներ
   բ) արաբական երկրներ
   գ) Ֆրանսիա-Քենիլուոթի երկրներ,
3. Ստեղծագործական ֆակուլտետ.
   ա) հեռուստատեսային եւ ռադիոդրագրություն (15 տեղ)
   բ) հեռուստատեսային ռեժիսուրայի (10 տեղ) բաժիններ:

Ուսուցման տեւողությունը հինգ տարի է: Անհրաժեշտության դեպքում համալսարանում կարելի է սովորել անհատական գրաֆիկով:

Համալսարանում կարող են միաժամանակ սովորել մյուս բուհերի ուսանողները, ձեռք բերելով հումանիտար բնագավառի երկրորդ մասնագիտություն: Ներկայացնելով տեղեկանք այն բուհերից, որտեղ նրանք սովորում են:

Ուսումը վճարովի է: Դրամական կուրսի էական փոփոխման դեպքում համալսարանն իրեն իրավունք է վերապահում փոխել ուսման վարձի չափը:

Ցեռնարկություններն ու կոոպերատիվները դայմանագրային կարգով կարող են ուսուցման համար գործուղել դիմորդներ համալսարանի ընթացիկ հաշվին փոխանցելով նրանց ուսուցման վարձը:

Ընդունելությունը կանցկացվի մրցութային կարգով: Դիմորդների մրցութային ընտրությունը կատարվում է դիմորդների մասնավոր ունակությունները բացահայտ անհատական տեսակցությամբ եւ հարցազրույցի հիման վրա, որն անց է կացնում «Սոցիմետր» սոցիոլոգիական անկախ կենտրոնը:

Ընդունելությանը մասնակցելու համար դիմորդները դէտք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝ ա) դիմում համալսարանի տնօրենի անունով, բ) միջնակարգ, միջնակարգ մասնագիտական, կամ բարձրագույն կրթության վկայական կամ դիպլոմ, գ) բուժծառայության (88 ձեւ), դ) 6 լուսանկար (3x4 չափի), ե) ինքնությունը հաստատող փաստաթուղթ:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմորդը դէտք է վճարի 3000 ռուբլի, որը, անկախ ինքնությունների արդյունքներից, չի վերադարձվում նրան:

Գործերն ընդունվում են ամբ հուլիսի 26-ից, ամեն օր, ժամը 11:00-17:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընդունող հանձնաժողովին: Երեւան, Հանրապետության հրապարակ, Միությունների տուն, 1-ին հարկ, ուսումնամեթոդական կենտրոն, 13 սենյակ: Հեռ. 52-05-90*

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

digitised by A.R.A.R.@

Մահմանադրություն

# ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

## *Մարդը ՀՌԱԿ-ի Սահմանադրության նախագծում*

ՀՌԱԿ Հանրապետական վարչության հավանությանն արժանացած ՀՀ Սահմանադրության նախագծի կենտրոնական դիմին ազատ մարդն է՝ օժտված բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների ամբողջ լիակատարությամբ:

Նախագծում իր արտացոլումն է գտել ռամկավար ազատական գաղափարների մարդասիրական բովանդակությունը: Առդեն Հոդ. 2-ում ընդգծվում է, որ «**Հայաստանի Հանրապետությունում մարդը, նրա իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք են**»: Հոդ. 25-ը, շարունակելով այս միտքը, հռչակում է, որ «**Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները անօտարելի են և նրան պատկանում են ի ծնե**»:

Առդեն այս երկու հիմնադրույթում առկա է մարդու ճակատագրի հարցում ռամկավար ազատական մոտեցման էությունը՝ մարդն ի սկզբանե, ի ծնե է օժտված բնական և անօտարելի իրավունքներով ու ազատություններով և ոչ թե դրանք ստանում է պետությունից: Անհատ-պետություն հարաբերություններում գլխավորը և որոշիչը մարդն է, իսկ պետությունն իր Սահմանադրությունում և օրենսդրության մեջ, ի դեպ իրեն, պարտավոր է պաշտոնապես հռչակել և երաշխավորել մարդու բնական իրավունքները և ազատությունները: Այս ազատական գաղափարը հասակ արտացոլված է նախագծի Հոդ. 2-ում, որտեղ կարդում ենք. «**Մարդու և քաղաքացու իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է**»:

Անհատ-պետություն հարաբերության նման ռամկավար ազատական իմաստավորումն առկա է նաև նախագծի Հոդ. 25-ում, որտեղ ասված է. «**Մարդու իրավունքները և ազատությունները գործում են անմիջականորեն, պարտադիր են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար**»:

Այդ նշանակում է, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք իրենց ամբողջ գործունեության հիմքում պետք է ունենան մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, խստիվ պաշտպանեն դրանք և ձեռնպահ մնան դրանք ոտնահարելու փորձերից:

Ունենալով անմիջական գործողության հատկությամբ օժտված իրավունքներ և ազատություններ, քաղաքացին իրավազոր է դրանք ուղղակիորեն գործադրել կյանքում: «**Յուրաքանչյուրը**, ասված է նախագծի Հոդ. 27-ում, **իրավասու է պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով**»: Այլ խոսքերով ասած, քաղաքացին իր իրավունքների խախտման դեպքում կարող է պետական մարմին դիմել կայանալ ձեռքին ունենալով Սահմանադրությունը և պահանջել իր ոտնահարված իրավունքի վերականգնումը ու դրա հետևանքով իրեն պատճառած բարոյական ու նյութական վնասի փոխհատուցումը: «**Պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն ընձեռել ծանոթանալու իր իրավունքներին և օրինական շահերին վերաբերող բոլոր փաստաթղթերին**» (Հոդ. 64): Հակառակ դեպքում քաղաքացին ազատ է դիմելու դատարանի օգնությանը: Հոդ. 65-ը սահմանում է, որ «**Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված քաղաքացիների իրավունքները և ազատությունները պաշտպանվում են իրավասու, անկախ և անաչառ դատարանի կողմից**»: Այսինքն, դատավորը պարտավոր է իրավախախտման վերաբերյալ քաղաքացու հայցն ընդունել և դրան օրինական ընթացք տալ միայն Սահմանադրության հիման վրա: Հակառակ դեպքում «**յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի դիմելու իր իրավունքների միջազգային պաշտպանությանը, եթե սպառվել են դրանք պաշտպանելու ներքին իրավական բոլոր հնարավորությունները**» (նույն տեղում):

Նախագիծն ամրագրում է ՀՀ քաղաքացիների լիակատար իրավահավասարությունը, անկախ նրանց «**ծագումից, գույքային վիճակից, ազգային պատկանելությունից, սեռից, կրոնից, լեզվից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, սոցիալական ծագումից, զբաղմունքի տեսակից և բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից**» (Հոդ. 23):

ՀՀ Սահմանադրության ՀՌԱԿ Հանրապետական վարչության հավանությանն արժանացած նախագծում ամրագրված են ժամանակակից միջազգային իրավունքի հանրանանաչ սկզբունքներում ու նորմերում արտացոլված մարդու գրեթե բոլոր հիմնական իրավունքները և ազատությունները: Նախագիծը ելնում է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, քաղաքացիական և քաղաքական իրավունքների և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրերից և բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթերից, որոնք վավերացվել են ՀՀ կողմից: Ի դեմս նախագծի Հոդ. 6-ի, «կազմում են ներքին իրավունքի բաղկացուցիչ մասը»: Ավելին, նախագծում ասված է, որ «**ներկա Սահմանադրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները և ազատությունները սպառիչ չեն. օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ իրավունքներ և ազատություններ**» (Հոդ. 65):

Դրվատանքի արժանի է նաև այն հանգամանքը, որ նախագծում ամրագրված քաղաքացու յուրաքանչյուր իրավունք ու ազատություն պահովված է դրա իրականացման համար կայուն ու հուսալի երաշխիքներով: Նման երաշխավորվածության տիպիկ օրինակ կարող է ծառայել ՀՀ քաղաքացիների սոցիալական պաշտպանության ու իրավունքի սահմանադրական ամրագրումը: Նախագծի Հոդ. 50-ում կարդում ենք.

«(1) **Հայաստանի Հանրապետությունը քաղաքացիներին սոցիալական ապահովության իրավունք ունեն ծերության, հաշմանդամության, հիվանդության, ծննդաբերության, կերակրողին կորցնելու դեպքերում և օրենքով սահմանված այլ հիմունքներով:**

(2) **Կենսաթոշակները, նպաստները և սոցիալական ապահովության մյուս ձևերը պետք է քաղաքացիների համար ապահովեն պետության կողմից սահմանված աշխատուժի նվազագույնից ոչ ցածր կենսամակարդակ:**

(3) **Պետությունը զարգացնում է սոցիալական ապահովության համակարգը, այս ոլորտում խրախուսում բարեգործությունն ու հասարակական հիմնադրամների ստեղծումը**»:

Բացի առանձին իրավունքների և ազատությունների համար երաշխիքներ սահմանելուց, նախագծի հատուկ գլխում (3-րդ) ամբողջական ձևով սահմանված են քաղաքացիների հանդեպ պետության պարտականությունները: Այս կառուցվածքը ուշագրավ է մարդու հանդեպ պետության սոցիալական պատասխանատվության սկզբունքը, որը հետևողականորեն մարմնավորված է ՀՌԱԿ-ի նախագծում: Նախագիծն իր Հոդ. 1-ում Հայաստանի Հանրապետությունը բնորոշում է ոչ միայն որպես ժողովրդավարական, իրավական, այլև **սոցիալական պետություն**:

Արտացոլելով ռամկավար ազատական մտածողության առավել առաջադիմական մոտեցումները, նախագիծը սահմանում է, որ «**Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուրի համար ապահովում է սոցիալական պաշտպանվածություն, կրթություն ստանալու, աշխատանքային գործունեություն ծավալելու, բարձր կենսամակարդակի հասնելու հավասար հնարավորություններ, անկախ ազգային կամ սոցիալական պատկանելությունից, բնակության վայրից և այլ հանգամանքներից**» (Հոդ. 10):

Նախագծում ասված է.

«(1) **Հայաստանի Հանրապետությունը խթանում է քաղաքացիների եկամուտների աճը, սահմանում է տնտեսապես հիմնավորված հարկեր, բնականոն կենսամակարդակը ապահովող նվազագույն աշխատավարձ, կենսաթոշակ, նպաստներ ու կրթաթոշակ, բարենպաստ կենսապայմաններ է ստեղծում հաշմանդամների ու զառամյալների համար:**

(2) **Տնտեսական վերափոխումները պետք է ապահովված լինեն սոցիալական պաշտպանվածության միջոցառումներով**» (Հոդ. 11):

ՀՌԱԿ-ի նախագծի մյուս բնորոշ գիծը նրանում ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարուստ բովանդակությունն է: Նախագծի այդ շահեկան կողմի լուսաբանման համար առավել հանգամանորեն անդրադառնանք մարդու երկու հիմնարար իրավունքների՝ մասնավոր սեփականության և ազատ ձեռնարկատիրական գործունեության Սահմանադրական ամրագրմանը:

Ելնելով ռամկավար ազատական դիրքորոշումից, նախագծի Հոդ. 8-ը սահմանում է.

«**Սեփականությունն անձեռնխխելի է: Սեփականատերը չի կարող կամայականորեն զրկվել իր ունեցվածքից**»:

Այս դրույթներն իրենց հետագա զարգացումն են ստանում նախագծի «Անհատը և պետությունը» բաժնի Հոդ. 55-ում, որտեղ ասված է.

«(1) **Սեփականի իրավունքը մարդու բնական իրավունքն է:**

(2) **Յուրաքանչյուրը կարող է իրեն պատկանող գույքը տիրապետել, օգտագործել և տնօրինել ինչպես միայնակ, այնպես էլ այլ անձանց հետ համատեղ:**

(3) **Ոչ ոք չի կարող զրկվել իր ունեցվածքից այլ կերպ, քան օրենքի հիման վրա դատարանի որոշմամբ:**

(4) **Ժառանգական իրավունքը երաշխավորվում է:**

(5) **Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է հակասի պետության, հասարակության կամ այլ անձանց օրինական շահերին**»:

Նույնպիսի լիակատարությամբ ամրագրված է նաև մարդու ձեռնարկատիրական գործունեության իրավունքը: Նախագծում նախ սահմանվում է, որ «**Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ պայմաններ է ապահովում քաղաքացիների և նրանց միավորումների ձեռնարկատիրական զարգացման համար**» (Հոդ. 8) և ապա ամրագրում է մարդու այդ իրավունքն իր բովանդակության ամբողջ հարստությամբ:

(1) **Յուրաքանչյուրն իրավունք ունի իր գիտելիքները, ունակությունները և գույքը ազատորեն օգտագործել ձեռնարկատիրական և տնտեսական գործունեության, օրենքով չարգելված այլ պարտնեռում:**

(2) **Չի թույլատրվում տնտեսական այնպիսի գործունեություն, որն ուղղված է մենաշնորհացմանը: Պետությունն իրավասու չէ որևէ մեկին վերապահել բացառիկ կամ նախապատվության իրավունք՝ ցանկացած տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար**» (Հոդ. 54):

Նախագծում նման խորությամբ սահմանված և երաշխավորված են մարդու և քաղաքացու մյուս բոլոր հիմնական իրավունքները և ազատությունները:

ՀՌԱԿ-ի նախագծում քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակումների հետ, առնչվող խնդիրները լուծված են միջազգային իրավունքի հանրանանաչ սկզբունքներում և նորմերում ամրագրված չափանիշներին լիովին համապատասխան:

Այստեղ ընդգծված է, որ նման «**սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության համար և չպետք է խեղաթյուրեն սահմանափակվող իրավունքների ու ազատությունների էությունը**» (Հոդ. 63): Ըստ որում, նախագիծը սահմանում է, որ «**իրավաբանական ուժ չունեն այն ենթաօրենսդրական ակտերը, որոնք սահմանափակում են քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունները**» (Հոդ. 64):

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակումների ամենից մեծ վտանգը ծագում է արտակարգ դրության ժամանակ: Գաղտնիք չէ, որ իրենց ներքին և արտաքին քաղաքականության մեջ ձախողված իշխանությունները հակում ունեն ցանկացած առիթով հայտարարել արտակարգ դրություն և այդ ու ձախ սահմանափակել քաղաքացիների իրավունքները և ազատությունները: ՀՌԱԿ-ի նախագիծն ամուր դաստիարակ է դնում իշխանությունների նման կամայականությունների հանդեպ: Հոդ 63-ում ասված է.

«(1) **Արտակարգ դրության դեպքերում, որը հայտարարվում է օրենքով, բացառապես ժողովրդի կյանքին սպառնացող իրական վտանգի առկայության դեպքում և միջազգային իրավունքի հանրանանաչ նորմերով սահմանված ընթացակարգին լիովին համապատասխան, քաղաքացիների իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել սոսկ այդ դրության սրության չափով**»:

Հետևաբար, ըստ նախագծի, արտակարգ դրություն-կարող է հայտարարվել «**բացառապես ժողովրդի կյանքին սպառնացող իրական վտանգի առկայության դեպքում**»: Ըստ որում, իշխանությունները, միջազգային իրավունքում սահմանված ընթացակարգին համապատասխան, պարտավոր են իրենց կողմից հայտարարվող արտակարգ դրության պատճառների և մտցվող սահմանափակումների մասին նախապես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով տեղյակ պահել նրա անդամ պետություններին և, որ առավել կարևոր է, չմտցնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումներ, որոնք գերազանցում են զվրալ արտակարգ դրության սրությունը:

Այսպիսով, ՀՌԱԿ Հանրապետական վարչության հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծում ռամկավար ազատական գաղափարների ոգուն լիովին համապատասխան մարդը հանդես է գալիս իր պետականորեն երաշխավորված իրավունքների և ազատությունների ամբողջ հարստությամբ:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

CEMA
CENTRE DE MANAGEMENT D'ARMENIE

*ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և ֆրանսիական ՀԻՄ ընկերությունը համատեղ ստեղծել են Հայաստանի Մենեջմենտի կենտրոն ՄԵՄՀ, որը գործում է 1991 թվականից: Կենտրոնի նպատակն է պատրաստել բարձրորակ մասնագետներ շուկայական տնտեսության տարբեր ոլորտներում աշխատելու համար: ՄԵՄՀ կենտրոնը կազմակերպում է 1993-94 ուսումնական տարվա ընդունելություն: Ուսումնառությունը տևողությամբ կլինի 13 ամիսներ: Լսարանային մեկ դասաժամը տևում է 45 րոպե:*

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՐԱԳԻՐԸ

1. Շուկայական տնտեսություն
2. Ձեռնարկությունը և նրա կազմակերպությունը
3. Մենեջմենտ և մարդկային ռեսուրսներ
4. Արդյունաբերական արտադրության մեթոդներ
5. Հաշվառություն
6. Ձեռնարկության ֆինանսական վերլուծությունը և հարաբերությունները դրամական հետ
7. Մարկետինգ
8. Վաճառք և բաշխում
9. Միջազգային առևտուր և արտահանման տեխնիկաներ
10. Ձեռնարկությունների իրավունք
11. Կառավարման ինֆորմատիկա
12. Հանրային ձեռնարկություններ
13. Արդյունքության քաղաքականությունը

*Ցանկացողները կարող են ունկնդրել ծրագրի ցիկլերից յուրաքանչյուրը՝ ըստ ընտրության, ինչպես նաև հաջորդաբար բոլոր ցիկլերին: Դասընթացները անցկացնում են Ֆրանսիայի փորձառու մասնագետները՝ միաժամանակյա թարգմանությամբ: Դասընթացի ավարտողներին կտրվեն համապատասխան վկայականներ:*

***ՄԵՄՀ կենտրոնը Ձեզ տեղեկացնում է, որ ուսումնական տարվա վերջում դասախոսությունների ոչ ցիկլին մասնակցած ունկնդիրներից լավագույններին Ֆրանսիա վերապատրաստման մեկնելու հնարավորություն կընձեռվի:***

Մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ
56-51-94 հեռախոսահամարով
Հասցեն. Հանրապետության 39.
ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ

digitised by A.R.A.R.@

Վրաստան

# ԵԹԵ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՐԳԱՎՈՐՎԻ...

**Աբխազիայի հակամարտության կարգավորման միացյալ հանձնաժողովի նիստից հետո, որտեղ կողմերը հավաստեցին հակամարտության գոտուց զորքերը դուրս բերելու եւ Սոչիի համաձայնագրի կատարումը շարունակելու իրենց մտադրությունը, միացյալ հանձնաժողովի վրացական մասի ղեկավարի տեղակալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿԱՎՍԱՁԵՆ բացառիկ հարցազրույց տվեց Պրոսֆակտում գործակալության թղթակցին:**

**– Ալեքսանդր Իրակլիեւիչ, հանձնաժողովի աշխատանքի ընթացքում վիճակվել է լսել, թե վրացական կողմը ձգձգում է բանակցությունները, ուշացնում զորքերի դուրսբերումը հակամարտության գոտուց:**

– Այժմ, միացյալ հանձնաժողովի աշխատանքի ժամանակ վճռվում է վրաց եւ աբխազ ժողովուրդների ճակատագիրը, պատերազմի եւ խաղաղության հարցը: Դրան մասնակցող անձանց պատասխանատվությունը մեծ է: Հիմա չի կարելի շտապել, հարկավոր է կշռադատել, ինչպես դուրս բերել զորքերը, ինչպես մտցնել խաղաղապահ ուժեր, քանի որ մեկ չկշռադատված քայլի հետեւանքով կարող ենք հայտնվել անդունդում: Եկել է պահը, երբ հակամարտությունը չկարգավորելու դեպքում այն կարող է վերաճել ընդհանուր կովկասյան պատերազմի, որն էլ ավելի դժվար կլինի ավարտել: Բանակցություններում զորքերը դուրս բերելու կամ չբերելու հարց չէր դրված: Դրանք միանշանակ կերպով դուրս են բերվելու, բայց մենք քննարկում էինք դուրսբերման ժամկետները, ձեւերը եւ երաշխիքները:

**– Այդ բանակցություններում կողմերը հավաստեցին զորքերը դուրս բերելու եւ համաձայնագրերի կատարումը շարունակելու մտադրությունը: Դուք հավատո՞ւմ եք, որ այդ մտադրությունները իրոք կկատարվեն:**

– Երջանիկ է նա, ով հավատում է: Ես նույնպես ուզում եմ հավատալ, որ ինչպես պայմանավորվել ենք, այնպես էլ կլինի: Բայց հասկանում եմ, որ տեխնիկապես դա շատ դժվար է անել: Թե մեկ եւ թե մյուս կողմը կարող են ունենալ զինված կազմավորումներ, որոնք չեն ենթարկվում հրամանի: Կողմերից տարաբախտաբար մեկ է իր տարածքում խիստ վերահսկողություն հաստատի համաձայնագրի կատարման նկատմամբ եւ ձգտի հասնել դրա կատարմանը:

**– Սոչիի համաձայնագիրը հերթական օղակն է Աբխազիայի հակամարտության կարգավորման համաձայնագրերի շղթայում, որոնք նախկինում ստորագրվել են եւ չեն կատարվել: Կա՞ն արդյոք երաշխիքներ, որ այս անգամ Աբխազիայի հակամարտությունն այնուամենայնիվ կհաջողվի կարգավորել:**

– Մարդիկ հոգնել են պատերազմից, երկու կողմերն էլ հանգել են այն հետեւությանը, որ իրենցից ոչ մեկի համար այս պատերազմը հաջող չի լինի: Եւ ով էլ հաջողության հասնի, հաղթող չի լինի: Այս անգամ հակամարտության կարգավորմանը եռանդագին մասնակից են դարձել միջազգային ընկերակցության՝ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի ներկայացուցիչները: Կարելի է պարզապես ստեղծել կոալիցիոն խորհուրդ, որը կլուծի այս բոլոր հարցերը:

Մենք մի քանի տարբերակ ունենք, իսկ մեր աբխազ գործընկերներն իրենց տեսակետն ունեն: Ճիշտ է, ես գիտեմ, որ մեր գործընկերներն հարց են առաջադրում Սուխումում օրինական իշխանությունն Աբխազիայի Գերագույն խորհրդի ձեւավորելու մասին: Դա ինձ անիրական է թվում:

**– Այսօր ինչպե՞ս եք գնահատում Թբիլիսիում տիրող իրադրությունը:**

– Կառավարության ճգնաժամից հետո մենք բոլորս այժմ ժամանակավորապես կատարում ենք մեր պարտականությունները: Այս իրավիճակն է ոչ միայն Թբիլիսիում, այլեւ ամբողջ հանրապետությունում: Ժողովուրդն առաջարկություններ է սպասում պետության ղեկավարից:

**– Սուխումից հաղորդումներ են ստացվում այն մասին, թե այնտեղ գնդակոծում են խաղաղապահ ուժերին, իսկ հանձնաժողովի ձեր մասի որոշ ներկայացուցիչներ (նկատի ունեմ գեներալ Ադամիային) հատուցության բանակցությունների են գնում գենքը գոտկատեղին: Հարց է ծագում. դա Վրաստանի պատվիրակության առանձին ներկայացուցիչների կողմից ուժի ցուցադրման եւ հակամարտության խաղաղ կարգավորման մերժման դրսեւորում չէ՞ արդյոք:**

– Ինչ վերաբերում է խաղաղապահ ուժերի գնդակոծմանը վերաբերող հաղորդումներին, մենք այդ հարցը բարձրացրել ենք բանակցություններում: Վստահ եմ, որ կրակել են ոչ թե այն պատճառով, որ դրանք խաղաղապահ ուժեր են, այլ այն պատճառով, որ ռազմական հակամարտության գոտում կրակում են: Ի դեպ, ՄԱԿ-ի ներկայացուցիչը համաձայնեց մեզ հետ: Սուխումում մենք հիմա փորձում ենք կարգուկանոն հաստատել: Իսկ ինչ վերաբերում է բանակցությունների ժամանակ գեներալ Ադամիայի մոտ գենքի առկայությանը, նա պիտի գիներալ է: Բացի դրանից, հայտնի է, որ կովկասցիները սիրում են զենք կրել: Բայց ես կարծում եմ, որ եթե միացյալ հանձնաժողովի անդամներն Ադամիային խնդրեին զենքը հանել, նա կհամաձայնվեր: Ես, օրինակ, զենք չեմ կրում: Կարծում եմ, որ զենք կրելը մեր ամենամեծ հանցանքը չէ:

**– Իսկ ո՞րն է ամենամեծ հանցանքը:**

– Ամենամեծ հանցանքն այն է, որ մարդիկ սպանում են իրար: Եւ այն փաստը, որ մենք չկարողացանք ժամանակին կարգավորել այդ հակամարտությունը, նույնպես դժբախտություն է:

ՆՏ-Պրոսֆակտում

Գ. Կարկարաշվիլի. «Վրաստանը բանակ չունի»

Վրաստանի պաշտպանության նախարար Գեորգի Կարկարաշվիլին օգոստոսի 13-ին Վրաստանի հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարեց, թե «այսպես կոչվում է բանակ, ըստ էության, կամավորներից բաղկացած զինված կազմավորումների համախմբում է»: Այդ «բանակի» կառավարումը կառուցվում է ոչ թե զինվորական կանոնադրությունների եւ կարգապահության վրա, այլ հեղինակության եւ բարեկամական հարաբերությունների վրա, նշեց պաշտպանության նախարարը: Կարկարաշվիլին խոստովանեց, որ մինչեւ օրս բանակն ընդհանուր զինապարտության սկզբունքների փոխադրելու բոլոր փորձերը անհաջողությամբ են ավարտվել, գարնանային զորակոչը փաստորեն ձախողվել է: Նրա կարծիքով, անկայուն իրադրության պատճառը թույլ տնտեսությունն է, որն ի վիճակի չէ բանակ պահել. մարտիկների հոգս անգամ երբեմն չի բավականացնում: «Աբխազիայի հակամարտությունը ցույց տվեց, որ այսպես կոչված բանակն այսօր իրեն չի արդարացնում եւ հարկավոր է կանոնավոր, լավ պատրաստված եւ կարգապահ բանակ», ընդգծեց Կարկարաշվիլին: Պաշտպանության նախարարը նշեց, որ ներկայումս բոլոր հույսերը կապված են աշնանային զորակոչի հետ, որն սկսվում է սեպտեմբերի 15-ին: Իսկ եթե դա էլ հայտնվի ձախողման եզրին, հարկ կլինի «մտցնել արտակարգ դրություն եւ բռնությամբ բանակ զորակոչել»:

ՆՏ

Լուրեր Հոսք

## Ֆրեդ Վուդրաֆը ԿՀՎ-ի գերգործակալ էր

«Ես Միացյալ Նահանգների կառավարության ամենից բարձր վարձատրվող ծառայողներից մեկն եմ», հայտնել էր Ֆրեդ Վուդրաֆը ամերիկացի լրագրող Թոմաս Գոլցին Թբիլիսիի «Մեսենջեր» հյուրանոցի բարում իր առեղծվածային մահից հինգ առաջ: Ստորագրելով գործակալին նկարագրելով «Վաշինգտոն պոստ» թերթի օգոստոսի 16-ի համարում, Գոլցը հայտնում է, որ իրենք ընկերացել էին Թուրքիայում 1985 թ. ծծանը, որտեղ երկուսով սառցաջրային լողով էին զբաղվում Անկարայից ոչ հեռու: Գոլցը հոդվածում Վուդրաֆին անվանել է «գերգործակալ»: Ութ տարի անց հանդիպելով Թբիլիսիում, հին ընկերները ջերմությամբ վերհիշեցին Թուրքիան, բարում խմեցին մինչեւ առավոտյան ժամը 4-ը, իսկ զրույցի ընթացքում Ֆրեդ Վուդրաֆը հայտնեց, որ ինքը մտադիր է վերականգնել Վաշինգտոնի հետ Շեւարդնաձեի ուղղակի հեռախոսակապը: Այնուհետեւ Գոլցը մեկնեց Բաքու, իսկ Վուդրաֆը Թբիլիսիում մնաց աղահովելու Շեւարդնաձեի անձնական անվտանգությունը: Ինչպես հայտնի է, գերգործակալը չկարողացավ պաշտպանել ինքն իրեն:

Սնարֆ

## Ռոլֆ Կնուդսենը հանդիպում ունեցավ է. Շեւարդնաձեի հետ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Ռոլֆ Կնուդսենը օգոստոսի 17-ին նամակ է ուղարկել Բուտրոս Ղալիին, խորհուրդ տալով Աբխազիայի հակամարտության գոտի ուղարկել եւս 80 դիտորդ: Սուխումից վերադառնալով, Կնուդսենը այդ մասին օգոստոսի 18-ին հայտնեց Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեին: Հանդիպման ժամանակ Կնուդսենը Շեւարդնաձեին նաեւ հայտնեց, որ ինքը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին խնդրել է այդ հարցը քննության առնել ամենասեղմ ժամկետում: Դրա հետ մեկտեղ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչն ասաց, որ վրաց-աբխազական հակամարտության գոտի խաղաղապահ ուժեր մտցնելու հարցը կքննարկվի, միայն թե դա առաջիկայում գործ է: Ռոլֆ Կնուդսենը դրական գնահատեց Ռուսաստանի դիրքորոշումը հակամարտության մեջ եւ ավելացրեց, որ միացյալ վերահսկիչ հանձնաժողովը մանրակրկիտ կաշխատի Աբխազիայից վրացիների տեղահանման փաստերի վրա: Կնուդսենը օգոստոսի 19-ին կմեկնի Մոսկվա, որտեղ նախատեսված է հանդիպում Բորիս Պասուխովի հետ:

Սնարֆ

Պատմություն

## Դիմակայության առիթ է

Ինչպես 1991 թ. օգոստոսին, այժմ էլ՝ խորհրդարանների դեմ նվաճված հաղթանակի 2-րդ տարելիցի օրերին հասարակությունը կիսված է երկու հակադիր ճամբարների: Դրա վկայությունն այն է, որ ժողովրդավարական ուղղվածության եւ կառավարությանն ընդդիմադիր կազմակերպությունները մտադիր են յուրովի նշել այդ տարեթիվը, ըստ որում միեւնույն վայրում՝ մայրաքաղաքի Կրասնոպրեսնենսկայա առափնյակում, «Սոչիսկայա տան» մոտերքում, որտեղ 1991 թ. օգոստոսի 19-21-ը «կենդանի օղակի» մասնակիցները Ռուսաստանի նարաստեղծ ժողովրդավարությունը պաշտպանում էին ԳԿՉՊ-ի ոտնձգություններից:

Պատրաստվելով զանգվածային ձեռնարկումների, տարբեր հասարակական-քաղաքական կառույցները եռանդագին հայտարարություններ են անում մամուլի համար:

Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին 1991-ի օգոստոսյան իրադարձությունների 2-րդ տարելիցի կապակցությամբ Ռուսաստանի իշխանության բոլոր ճյուղերին մեղադրում է «չտեսնված ճգնաժամի համար, որը երկիրը հասցրել է կործանման եզրին»:

Այդ օրերին նվիրված «Կեցցես, Ռուսաստան» տոնի նախօրեին Ռուսաստանի քաղաքացիներին ուղղված դիմումով հանդես եկավ նաեւ փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյը: Նախագահի շրջապատին մեկ անգամ եւս ցնցադաստելով Բորիս Ելցինին «օրինական կերպով ընտրված Գերագույն խորհրդի վերացմանը միտված ուժային գործողությունների դիմելու» համար, նա քաղաքացիներին կոչ արեց հանդես բերել «զգոնություն եւ առավելագույն զսպվածություն», որպեսզի «առիթ չստեղծվի բռնություններ սկսելու եւ երկրում արտակարգ դրություն մտցնելու համար, որպեսզի Ռուսաստանում պահպանվեն օրինականությունն ու սահմանադրականությունը»:

Ռուսաստանում ժողովրդավարության հաղթանակի 2-րդ տարեդարձի առթիվ օգոստոսի 19-ին պատրաստվում է իր խոսքն ասել նաեւ երկրի նախագահը: Ակնհայտորեն մտադիր լինելով կանխել նրան, Գերագույն խորհրդի նախագահ Ռուսլան Խասբուլատովը օգոստոսի 18-ին Ռուսաստանի հեռուստատեսության ուղղակի հեռարձակման ընթացքում կդատապարտի քաղաքացիների հարցերին: Նույն առիթով մտադիր են մամուլի ասուլիսներ կազմակերպել Ռուսաստանի արդյունաբերողների ու ձեռնարկատերերի միությունը, «Քաղաքացիական դաշինքը» եւ կոմունիստները:

Այսպիսով, խորհրդության նկատմամբ նվաճված հաղթանակի տարելիցը առիթ է դառնում թե ղեկավարների եւ թե քաղաքականությամբ ակտիվորեն զբաղվող քաղաքացիների հերթական դիմակայության համար:

ԱՐՄԵՆ ՊՐԵՍԻՏՅԱՆ-ՏԱՍՍ

Վրաս. Կյանքից

## Կազակները գոհ են հանդիպումից

Թերեքի կազակների զորքի ներկայացուցիչների հետ Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Վիկտոր Շումեյկոյի հանդիպումը շարունակվել է 4 ժամից ավելի: Ինչպես օգոստոսի 18-ին Սնարֆ գործակալությանը հայտնեց պատվիրակության անդամներից մեկը՝ Գորյաչիե Վոդիի կազակների ժողովի ատաման Վիտալի Դուբինինը, հանդիպումն անցել է լիակատար փոխըմբռնման մթնոլորտում:

Որոշվել է կարճել այն քրեական գործը, որը Մինեռալնիե Վոդիի երկաթուղային դատախազությունը հարուցել էր Թերեքի կազակների զորքի Պյատիգորսկի օկրուգի կազակների նախազգուշական ձեռնարկման մասնակիցների նկատմամբ, որոնք օգոստոսի 7-ին 2.5 ժամով շրջափակել էին երկաթուղին եւ խճուղային ճանապարհները:

Որոշ հարցերի առթիվ համապատասխան գրություններ են ուղարկվել Ռուսաստանի սահմանադրական դատարանին եւ Գերագույն խորհրդին: Երկու կողմերը գոհ են մնացել բանակցությունների արդյունքներից եւ պայմանավորվել են հետագա հանդիպումների առնչությամբ:

Սնարֆ

## Կարագանդայում սկսել են արտադրել «Սամսունգ» սառնարաններ

Հայտնի հարավկորեական կորպորացիայի մասնակցությամբ Կարագանդայի մեքենաշինական գործարանում շահագործման է հանձնվել տարեկան 100000 երկխցիկ սառնարաններ արտադրող հոսքագիծը: Առայժմ բոլոր կոմպլեկտավորողները հասցվում են Հարավային Կորեայից, սակայն երեք տարի անց նրանք կարտադրվեն տեղում: Ինչպես հայտարարել է «Սամսունգ» կորպորացիայի նախագահ Կիգիլ Շինը, որը հատուկ ժամանել էր հոսքագծի բացման արարողությանը, կորպորացիան մտադիր է մասնակցել Ղազախստանի բնական պաշարների հետախուզման եւ արդյունահանման աշխատանքներին, ինչպես նաեւ՝ տրանսպորտային երկաթուղու շինարարությանը:

Էկոպրես

## Չինաստանը փոխարկելի է դարձնում յուանը

Չինաստանը արեց առաջին քայլը յուանի փոխարկելիության ուղղությամբ: Պեկինը թույլատրել է սահմանամերձ առեւտուրը կատարել նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ չինական տարադրամով: Ի դեմ, այդ առեւտրի ծավալը գնահատվում է գրեթե երկու միլիարդ դոլար:

Էկոպրես

digitised by A.R.A.R.@

**Լուրերի Հոսք**

## Գերմանական բանկը Ուկրաինայի խորհրդատու

Եվրահամայնքը հանձնարարել է գերմանական «Կոմմերցբանկին» համակարգել Ուկրաինայի կառավարությանը հասկացվելիք խորհրդատվական օգնությունը խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհումն իրականացնելիս: «Կոմմերցբանկի» ղեկավարած կոնսորցիումի մեջ են մտել այնպիսի ֆիրմաներ, ինչպիսիք են «Փրայս Ուոթեր Հաուզը» եւ «Սիուայրը»: էկո-որես

## 86 մլն դոլլար՝ բարեփոխումների դեմքում

Միջազգային վալյուտային հիմնադրամը թույլատրել էր Ղազախստանին 86 մլն դոլլարի վարկի տրամադրումը, որը նպաստակաուղղված է տնտեսական բարեփոխումների օժանդակությանը: Ըստ ՄՎՀ-ի նախագահի հայտարարության, Ղազախստանին խոստացել են տալ եւս մեկ վարկ նույն գումարի չափով, եթե բարեփոխումների գործընթացը շարունակի իր զարգացումը: էկո-որես

## 20 ոչխար եւ արտադրություն

Շվեդական «Սկանիա» ընկերությունը եւ էստոնական Տարտուի մեքենաշինական գործարան ոչխարական ձեռնարկությունը հիմնում են «Բալթական» համատեղ ձեռնարկությունը, որը ոչխի զբաղվի խաղային եւ միջխաղային ավտոբուսների համահավաքով: Ձեռնարկության հզորությունը կկազմի տարեկան 100-120 մեքենա: Այն մտադիր է սկսել արտադրությունը առնվազն 20 ոչխարներ տանալուց հետո: Հիմնական հանգույցները կառաքի «Սկանիան», իսկ՝ բրիտանական «Դաբլ մեսսենջը», որոնք դեսալներ, մասնավորապես էլեկտրահաղորդալարերը եւ նստարանների ոչխատաները նախատեսվում է արտադրել էստոնիայում: էկո-որես

## Էդուարդ Շեւարդնաձեն կայցելի Մոսկվա

Մոս օրերս էդուարդ Շեւարդնաձեն կայցելի Մոսկվա, որտեղ հանդիպումներ կունենա Ռուսաստանի բարձրագույն ոչխատնական անձանց հետ, օգոստոսի 18-ին Սնարի գործակալությանը հայտնեցին Վրաստանի ոչեստության ղեկավարի մամուլի ծառայությունում: Սնարի

## Մոդեմ վերնաբաժիկի գրպանում

«Մոտոռոլա ինկը» ներկայացրել է փոքրածավալ անլար մոդեմ, որը տեղավորվում է վերնաբաժիկի գրպանում: Վարկային քարտի չափ ունեցող սարքի հաստությունը 0,51 սմ է: Այն ունի ինքնասնուցում եւ ալեհավաք, որը կարող է միանալ Փի Սի էն, Սի Այ էյ կայանքին: Նոր ստանդարտ է փոքրածավալ համակարգիչների համար: Մոդեմը կաղապարվի մեկ եւ երկկողմանի աշխատանք լոկալ եւ բաշխված ցանցերի հետ, մեծ քանակի մասնավոր ցանցերի հետ նմանատիպ: Նորույթն իսկույն աջակցություն գտավ մեծ թվով ոչտենցիալ գնորդների կողմից, որոնք հավանություն են տվել նոր ստանդարտին: Սպասվում է, որ դրանց թիվն ավելի կաճի: էկո-որես

## Բերք կա, բերքահավաք չկա

Ղազախստանի ոչեսվիճակն անցյալ տարվա համեմատությամբ այս տարի կանխատեսում է հացաբույսերի միջին բերքատվության երկու ցենտներ ամ, որ կազմում է հեկտարից 15 ցենտներ: Դրա հետ մեկտեղ նշվում է, որ հացահատիկի բերքահավաքի տեմոերը դարձյալ դանդաղ են, օգոստոսի երկրորդ տասնօրյակի սկզբին հացահատիկը հնձվել էր ցանքատարածությունների միայն 11 տոկոսի վրա: Ասկա է բերքահավաքի կոմբայնների սուր ոչակաս (մինչեւ 700 միավոր), ինչպես նաեւ ոչահեստամասերի, վառելիքախառնուրդների ոչկաս: Այսպես, հանրապետության արեւմտյան, արեւելյան եւ կենտրոնական շրջաններում ոչահեստամասերի ոչկասի ոչսճառով չեն գործում 6 բեռնատարից մեկը եւ 8 տրակտորից մեկը: Բենզինի ոչաբարները կազմում են կարիքների մեկ քառորդը, դիզելային վառելիքինը՝ մեկ երրորդը, բենզելային յուղերինը՝ ընդամենը 7 տոկոսը: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

**Մշակույթ**

# Հայագիտական նոր հանդես

**Օրերս մեզ հասավ Բեյրութում հրատարակված «Հիւսիսեան հայագիտական հանդէսի» անդրանիկ համարը, որ արդյունք է նույնանուն ամբիոնի ծավալած գիտական գործունեության: Այդ հայագիտական ամբիոնը հիմնվել է 1964-ին բարերար Երվանդ Հյուսիսյանի անվան հիմնադրամի շնորհիվ եւ նպատակ ունի նպաստելու գիտության այդ բնագավառի զարգացմանը սփյուռքահայ երբեմնի ամենամեծ գաղթօջախում: Նրա առաջին եւ երկրամյա տեսուչ Վահե Վահյանի, վերջինիս փոխարինելու եկած երիտասարդ տեսուչներ Վայե Ղազարյանի ու Պարույր Աղոյաշյանի, նաեւ տեղացի եւ Հայաստանից հրավիրված մասնագետներ Սերգեյ Պետրոսյանի, Գնել արք. Ներեմյանի, Պետրո Սիմոնյանի, Հակոբ Ավետիքյանի եւ այլոց ջանքերի շնորհիվ անցած 3 տասնամյակներում այն նկատելիորեն զորացավ՝ վայելելով լայն ճանաչում:**

Հիրանանյան 16-ամյա պատերազմից հետո վերջապես անցած տարի հայագիտական այս ամբիոնը՝ գլխավորությամբ նոր տեսուչ, լեզվաբան Ռուբեն Սամատեսոյանի, վերսկսեց իր գործունեությունը, որի արդյունքներից մեկն էլ ներկայացվող տարեգիրքն է: Արաբական այդ երկրի իր մյուս ոչաբոնակիցների՝ «Հասկ հայագիտական տարեգրքի» եւ «Հայկազեան հայագիտական հանդեսի» հետ այն կոչված է համախմբելու եւ ի մի բերելու ուժերը հայ բանասիրության մարզում: Դժվար է գերագնահատել գիտական այս հրատարակության կարեւորությունը մեր օրերում, երբ Հայաստանում կամ փակվում են եղած հայագիտական հանդեսները, կամ էլ հրատարակվել շարունակվողները լույս են տեսնում անկանոն եւ ուշացած: Էլ չենք խոսում այն մասին, որ վերջին տարիներին ընկերային եւ տնտեսական ծանր իրավիճակի ոչսճառով կտրուկ նվազել է կոթողային աշխատությունների եւ մենագրությունների թիվը:

Մասամբ այս բացը լրացնելուն է կոչված նաեւ «Հյուսիսյան» հանդեսը, որը լույս աշխարհ է բերել Հայ բարեգործական ընդհանուր միության Լիբանանի շրջանային հանձնաժողովի հրատարակությամբ: Իր առաջին համարում այն լայնորեն տեղ է տվել Հայաստանում աղրող եւ ստեղծագործող շատ գիտնականների: Ավելին, ինչպես կարդում ենք տարեգրքի Յառաջաբանում, այնտեղ այսուհետեւ էլ «զգալի տեղ ոչիտ հատկացվի նաեւ հայրենի մատենագրության, հայագիտական այս նոր հանդեսը դարձնելով հայրենիք-սփյուռք անհրաժեշտ միասնականությունը աղահովող օգաբաշխ ու կարեւոր օղակներեն մեկը»: Որ դրանք լոկ խոսքեր չեն, լավագույնս երեւում է թեկուզ այս համարի հոդանցիկ բնությունից: Նախ՝ տպագրված հոդվածների հեղինակներեն մեծ մասը հայաստանյան գիտնականներ են, ապա տարափված թեմաներն ընդգրկում են լայն ծիր՝ սկսած վաղ միջնադարյան հայ գրականությունից մինչեւ արդի արեւելահայ եւ սփյուռքահայ գրական երեւույթները, լեզվական հարցերը, ոչասմական, երաժշտական եւ ճարտարապետական խնդիրները: Ամեն դեպքում հաճելի է կողք-կողքի տեսնել հայրենի եւ սփյուռքահայ գիտնականների, մասնավորապես՝ մի երեւույթ, որ խրան կարող է հանդիսանալ նրանց հետագա համագործակցության եւ ուժերի միավորման համար՝ ի շահ հայագիտության ընդհանուր զարգացման: Այսպես գտնում ենք, օրինակ, Մինաս Գոճայանի հոդվածը՝ նվիրված 9 դարի հայ մատենագրության «կարգ մը հարցերի», առյա Հենրիկ Բախչինյանի ուսումնասիրությունը Պաղտասար Դպրի կյանքի ու գործի վերաբերյալ: Մեր մամուլից ընթերցող լայն շրջանակներին քաջ հայտնի Սամվել Կարապետյանն այս անգամ քննության է արժանացրել Ճառ (Զախարալա) քաղաքը եւ նրա հայոց եկեղեցին: Մենծանուն կոմպոզիտորի որդին՝ Ռուբեն Ալթունյանը, նշելով, որ «Թաթուլ Ալթունյանի ստեղծագործական ժառանգությունը (մոտ 500 ժողովրդական երգերի եւ պարեղանակների մշակումներ) այսօր էլ դեռ կարիք ունի երաժշտագետների մանրամասն ու խորը ուսումնասիրության», իմն է փորձում ներկայացնել երգերի մշակման նրա սկզբունքները:

«Հյուսիսյան հայագիտական հանդեսը» պարունակում է նաեւ 2 գրախոսություններ, որոնցից առաջինում Պետրոս Պետրոսյանը ներկայացնում է անցած տարի Անթիլիասում տպագրված Սուրեն Դանիելյանի «Սփյուռքահայ վեպը» հատորին: Երկրորդի հեղինակն է հանդեսի առաջին համարի պատասխանատու խմբագիր, լեզվաբան Ռուբեն Սամատեսոյանը: Նա քննության առարկա է դարձրել Բեյրութում նույնպես վերելով է հանդես գալիս, անգիջում պայքարից հետո խաղաղ ելք ունեցավ: Մնացականյանը 6 հնարավորից ունի 4,5 միավոր: Նույնքան միավոր է վաստակել նաեւ վարպետ Սելիխով Խաչիյանը: Այսօր առաջնությունում միակ հանգստյան օրն է, իսկ վաղը տեղի կունենան 7-րդ տուրի հանդիպումները: Կմրցեն.

Եղիազարյան-Ստ. Սինասյան
Մնացականյան-Համբարձումյան
Միրզոյան-Սեֆերյան
Դանիելյան-Գյոզալյան
Ստա Սինասյան-Խաչիյան
Քալանթարյան-Թավադյան:

ները: Ամեն դեպքում հաճելի է կողք-կողքի տեսնել հայրենի եւ սփյուռքահայ գիտնականների, մասնավորապես՝ մի երեւույթ, որ խրան կարող է հանդիսանալ նրանց հետագա համագործակցության եւ ուժերի միավորման համար՝ ի շահ հայագիտության ընդհանուր զարգացման: Այսպես գտնում ենք, օրինակ, Մինաս Գոճայանի հոդվածը՝ նվիրված 9 դարի հայ մատենագրության «կարգ մը հարցերի», առյա Հենրիկ Բախչինյանի ուսումնասիրությունը Պաղտասար Դպրի կյանքի ու գործի վերաբերյալ: Մեր մամուլից ընթերցող լայն շրջանակներին քաջ հայտնի Սամվել Կարապետյանն այս անգամ քննության է արժանացրել Ճառ (Զախարալա) քաղաքը եւ նրա հայոց եկեղեցին: Մենծանուն կոմպոզիտորի որդին՝ Ռուբեն Ալթունյանը, նշելով, որ «Թաթուլ Ալթունյանի ստեղծագործական ժառանգությունը (մոտ 500 ժողովրդական երգերի եւ պարեղանակների մշակումներ) այսօր էլ դեռ կարիք ունի երաժշտագետների մանրամասն ու խորը ուսումնասիրության», իմն է փորձում ներկայացնել երգերի մշակման նրա սկզբունքները:

«Հյուսիսյան հայագիտական հանդեսը» պարունակում է նաեւ 2 գրախոսություններ, որոնցից առաջինում Պետրոս Պետրոսյանը ներկայացնում է անցած տարի Անթիլիասում տպագրված Սուրեն Դանիելյանի «Սփյուռքահայ վեպը» հատորին: Երկրորդի հեղինակն է հանդեսի առաջին համարի պատասխանատու խմբագիր, լեզվաբան Ռուբեն Սամատեսոյանը: Նա քննության առարկա է դարձրել Բեյրութում հրատարակված երկհատոր «Հայոց լեզվի նոր բառարանը», որն ընդգրկում է ավելի քան 50 հազար բառ եւ դարձվածք: Հընթացս շարադրանքի նա անդրադառնում է նաեւ հայ բառարանագրության այսօրվա հրատաղ խնդիրներին:

Հայաստանյան եւ սփյուռքահայ գիտնականների համատեղ մասնակցությամբ նվիրված հանդեսի հրատարակումը բնականաբար ծնունդ է տվել մի շարք խնդիրների՝ կապված օտար բառերի տառադարձության, կետադրության, գլխագրերի գրության եւ հարակից այլ հարցերի հետ: Խմբագրական կազմը, որի մեջ մտնում են նաեւ հայր Անդրանիկ վրդ. Կոռանյանը, Ժիրայր Դանիելյանը եւ Արամ Սեփերճյանը, որոշել է դիմել արեւելահայ եւ արեւմտահայ համակարգերը: Նույնիսկ ենթադրություն է հայտնվել այս կապակցությամբ, որ որի «մեր հանդեսին առաքելություններեն մեկն ալ պիտի ըլլա այս կարգի հարցերու միօրինակացմանը նպաստելը, ուղղագրական, կետադրական տարբերությունները նվազագույնի հասցնելը, որ ոչ միայն բաղձալի, այլեւ միանգամայն հնարավոր գործ է»:

Շնորհավորելով հայագիտական նոր հանդեսի ծնունդը՝ միաժամանակ հույս հայտնենք, որ շարունակելով գործել ինչպես այս, այնպես էլ ուրիշ շատ այլ նպատակներ: Այդպես հիմք է տալիս մտածելու «Հյուսիսյան հայագիտական հանդեսի» անդրանիկ թիվը, որն այժմ է ընկնում նաեւ տպագրական բարձր որակով եւ ճաշակով ձեւավորմամբ:

ԼԵՎՈՆ ԼԱՇԿՅԱՆ

**Սյուր Զրույց**

## Մտքերի կարկտան

◆ Միայն սեփական մահով է, որ մարդ փոխում է իր աղրելակերպը: Ուրիշների մահը այդ տեսակետից չի օգնում, սակավ բացառությամբ:

◆ Մարդ կա գլխին կտուր ունի, մարդ էլ կա՝ հուսակտուր:

◆ Երբ ծախորդ օրերը երթան, ոչեսք է փոխել նրանց եռ գալու ճանապարհը:

◆ Հոգեվիճակն արդեն բանաստեղծություն է:

◆ Պատմությունը բաշխվում է ոչ ըստ ցեղակցությունների, այլ ըստ բանաստեղծության:

◆ Կենդանաբանական այգին այն տարածքն է, որտեղ վերացել է գոյության պայքարը կենդանիների համար, ի բացառյալ ծառայողների:

◆ Քրեական գործիքը նույն խոշորխոսկան գործիքն է, որը հրաժարվել է երեսպատությունից:

◆ Մի մարդ, որ շատ գիտեր, սոյանեցին, երբ մահ էր ածում իր շանը: Հետաքրքիր է՝ շունը ողջ մնա՞ց, նա հո այդխանը չգիտեր:

◆ Նկատի ունեցեք, որ մուրացիկը ծառայություններն ընդունում է նաեւ տարադրամով:

Դերձակավարի՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## Մտքեր, մտքեր

◆ Հաճախ հիմարի աղմուկը խելոքի լռությունից տեղին է:

◆ Ո՞ւմ են հարկավոր սուր մտքերը, դրանք հեշտությամբ կտրում են լսողությունը:

◆ Մտքերդ վրայիս փոշին, ես անոթայման կլվայլեմ:

◆ Նրան ամբիոն տրամադրեցին, եւ նա սկսեց ննջադասել Սոկրատեսին:

◆ Հիմա,- գոռացին հիմարի դեմքից: Հիմարը ծիծաղեց նրանց հիմարության վրա:

◆ Վիրահատությունը հաջող անցավ, դիակը կարող եք տանել:

◆ Ամենեին սարսափելի չէ հիմարների մեջ հայտնվելը, սարսափելին ընդմիշտ հիմարների մեջ մնալն է:

ՍԱՆԴՈՒՈ ՋՈՒԼՅԱՆ

**ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ**

# ՄԻԱԿ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆ ԷԼ ԱՌԱՋԱՏԱՐ

Շախմատի տղամարդկանց ՀՀ բարձրագույն խմբի առաջնությունում տեղի ունեցել 6 տուր: Նախօրեին կայացած 6-րդ տուրում գրանցվել են այսոիսի արդյունքներ.

Թավադյան-Ստա Սինասյան 1/2-1/2
Խաչիյան-Եղիազարյան 1-0
Համբարձումյան-Միրզոյան 1-0
Սեֆերյան-Գյոզալյան 1-0
Դանիելյան-Քալանթարյան 1/2-1/2
Ստ. Սինասյան-Մնացականյան 1/2-1/2

Իր հաստն խաղով շարունակում է ուրախացնել աղջիկների աշխարհի կրկնակի չեմպիոնուհի, ՖԻԴԵ-ի վարոեն 15-ամյա Էլինա Դանիելյանը:

Չորրորդ տուրում Դանիելյանը գիջելով գյուրեցի Ստա Սինասյանին, հաջորդում անմիջապես առավելության հասավ մոսկվացի Սեֆերյանի նկատմամբ, իսկ երեկ տեղի ունեցած 6-րդ տուրում Երեւանի նախկին չեմպիոն Նորայր Քալանթարյանի հետ մրցավեճում հասավ զինվորի առավելության, բայց համառ պայքարից հետո պարտիան ավարտվեց ոչ ոքի: Բոլոր դեպքերում Էլինան հավասար պայքար է մղում մեր հանրապետության առաջատար շախմատիստների հետ: Նա 6 հնարավորից վաստակել է 3 միավոր: Իսկ միանձնյա առաջատարն է մրցաշարի մասնակից միակ գրոսմայստեր Ստեփան Սինասյանը, որը 6 հնարավորից վաստակել է 5 միավոր: Նախօրեին տեղի ունեցած կենտրոնական հանդիպումը միջազգային վարոեն, Հայաստանի բազմակի չեմպիոն Էդուարդ Մնացականյանի հետ, որն ընթացիկ առաջնությունում նույնպես վերելով է հանդես գալիս, անգիջում պայքարից հետո խաղաղ ելք ունեցավ: Մնացականյանը 6 հնարավորից ունի 4,5 միավոր: Նույնքան միավոր է վաստակել նաեւ վարոեն Սելիխով Խաչիյանը: Այսօր առաջնությունում միակ հանգստյան օրն է, իսկ վաղը տեղի կունենան 7-րդ տուրի հանդիպումները: Կմրցեն.

Եղիազարյան-Ստ. Սինասյան
Մնացականյան-Համբարձումյան
Միրզոյան-Սեֆերյան
Դանիելյան-Գյոզալյան
Ստա Սինասյան-Խաչիյան
Քալանթարյան-Թավադյան:

# Հարկավոր է ուշադիր լինել

Մենք անչափ ուրախ ենք, որ մեր ընթերցողներն այս ծանր ու հոգսաբաշխ ժամանակներում ոչ միայն հետեւում են մեր թերթում լուսաբանվող մարզական կյանքին նվիրված անցուդարձին, այլեւ իրենց առաջարկություններն ու դիտողություններն են անում: Բայց եւ լինում են դեպքեր, երբ անտեղի մեղադրանքներ են հնչում: Երեւանի Ավան-Աբինքի 1/16 շենքի 19 բնակարանի բնակիչ Հրաչիկ Սարգսի Փարսադանյանը խմբագրությանը հասցեագրված 6 էջանոց նամակում հանդիմանում է այն բանի համար, որ «Ազգ» թերթի հունիսի 26-ի համարի մարզական էջի «Երբ կրթերը բորբոքվում են» վերնագրով հոդվածում մանրամասն մեկնաբանություն է գտնում ՀՀ ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության 12-րդ տուրի «Բանանց»-ՀՄԸՄ հանդիպման մասին, նշվում են տուրի մյուս հանդիպումների արդյունքները, բայց ոչ մի խոսք չի ասվում, թե ինչ հաշվով է ավարտվել այդ խաղը: Բայց եթե մեր թերթի հարգարժան ընթերցողը մի փոքր ուշադիր լիներ, առավել եւս, որ պարոն Փարսադանյանն իրեն համարում է «Ազգի» մշտական ընթերցող, ապա կնկատեր, որ մեկ օր առաջ «Ազգի» հունիսի 25-ի համարում «Բանանցը» կտրվում է առաջատարներից» վերնագրով հոդվածում օրերասիվ ծեւով նշված էր ոչ միայն այն, որ այդ կարեւոր խաղն ավարտվել է «Բանանցի» օգտին 7-2 հաշվով, այլեւ, որ գոլերը խփել են Գ. Քանալյանը (18), Ս. Բարսեղյանը (50,57,70), Անդ. Հովսեփյանը (55), Վ. Հովհաննիսյանը (78), Կ. Միհայելյանը (85) («Բանանց»), Վ. Ավետիսյանը (35), Գ. Հովհաննիսյանը (65): Սպասում ենք մեր ընթերցողների առաջարկներին եւ տեղին դիտողություններին: ■

# Կանանց միջփնջայինն էլ ավարտվեց

Ջակարտայում տեղի ունեցած շախմատի կանանց աշխարհի առաջնության հերթական շրջափուլի միջփնջային մրցաշարը որոշեց այն 8 շախմատիստուհիներին, որոնք քաջի համար պայքարը շարունակելու են հավակնորդուհիների մրցափուլում: Առաջին եռյակում տեղ գրաված շախմատիստուհիներից երկուսը Վրաստանի ներկայացուցիչներն են, աշխարհի նախկին չեմպիոնուհի Չիբուրդանիձեն եւ գրոսմայստեր Սոխասիան: Մրցանակակիր է դարձել նաեւ Գալինա Իվանչուկը, լվովցի անվանի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկի տիկինը: Անվանիներից հաջորդ փուլ է դուրս եկել նաեւ ուվեր Պիա Կրամլինգը:

Ինչպես հայտնի է, գեղեցիկ սեքսի մեջ ամենաաղանդավոր շախմատիստուհին, 17-ամյա հունգարուհի Զուզիթ Պոլգարը, որը բնականաբար նաեւ ամենարարձր գործակիցն ունի, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, շարունակում է արհամարհել կանանց առաջնությունը: Զուզիթին վերջերս ընդամենը կես միավոր չի հերիքել տղամարդկանց միջփնջային մրցաշարում հավակնորդների մրցափուլ անցնելու համար: ■

Բաժինը վարում է Մնացաս ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

SARDARAPAT travel

54.62.27

Հրավիրում ենք Ձեզ թռիչքի
ամեն երեքշաբթի

ԿՐԱՍՆՈԴԱՐ-ԲԵՅՐՈՒԹ-ԿՐԱՍՆՈԴԱՐ

ԱՐԺԱՐԿՈՍՏ ԹՌԻՉՔԵՐ

PUBLIGET



ԼՈՒՍԱՍ

ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
ԿՈՄԵՐՑԻՈՆ ՉՎԵՐԹՆԵՐ

ՍԻՐԻԱ
Երեւան-Հալեպ-Երեւան
ԱՐԱԲ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Երեւան-Շարժա-Երեւան

Ցածր գներով առաջարկում է նաեւ անհատական եւ խմբային տուրիստական ճանապարհորդություններ

ՍԻՐԻԱ (Հալեպ 7 օրով)
ԱՐԱԲԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Շարժա 4 օրով)

*Բելգիայում տեղի կայաց նոր հաստատելի Միջազգային եւ խմբային զբոսաշրջիկներ:*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱԳԻՐ ԵՎ ԹՈՒՂԹ
ՕԴԱՆԱՎԱՐԻՆ ԿԱՊԵԼ Է ԹԱՐԳԼ
52-17-68 56-68-17 ՀԵՌԱԽՈՍԵՐՈՎ
ԲԱՑԱՌԻԿ ԵՎ ՀԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԼԵՐ ՕԳԵՐԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30
ՊԱՐԱԿԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

PUBLIGET



ՕՈՋՐ ՀԷԿ-ԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Մոսկվա խորհում գտնվող ծեռնարկությունը ոլորտում եւ քանակով ծառայարում է բարձր հուսալիություն ունեցող փոքր ՀԷԿ-եր, որոնք նախատեսված են ինչպես մեկուսացված սպառողների, այնպես էլ համակարգում աշխատելու համար:
Սպրինգի ՀԷԿ-ի տեղադրման համար բավական է միայն աղբերել խողովակի անկյունը հանդարտական ջրի ճնշումով: Բարձր կլորոգիական մաքրությունը թույլ է տալիս տեղադրել ՀԷԿ-եր խմելու ջրի ջրաբերում:
Հիդրոագրեգատների եզակի հզորությունը կազմում է 4-500 կՎտ եւ ավելին: Ճնշումների աշխատանքային ընդգրկույթը՝ 2 մինչեւ 300 մետր: Կայանները աշխատում են ավտոմատ ռեժիմով: Պահասման եւ սարքավորումների ծառայարարման աշխատանքները կատարվում են 4-8 ամսում:
1 կՎտ տեղադրված հզորության գինը կազմում է 80-100 հազար տոլար:

**Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝**
**494-31-43 (Մոսկվա), 53-73-68, 62-87-23 (Երեւան)**

PUBLIGET



ՇՐՋԻՆ ԱՐԺԻՔ ԿԱՐՃՈՒԹՅՈՒՆ

*Արտասահմանյան եւ ներքին տուրիզմի կարճությունը հրավիրում է*
բոլոր ցանկացողներին հաճելի ճանապարհորդության

ԵՐԵՎԱՆ-ՊԼՈՎԴԻՎ-ԵՐԵՎԱՆ

*ուղիղ չվերթով օգոստոսի 27-ին եւ յուրաքանչյուր 14 օրը մեկ:*

*Գները մատչելի են:*

Ձեզ սպասում է ոչ միայն հաճելի հանգիստ, այլեւ կարող եք գնումներ կատարել Պլովդիվի առաջնակարգ խանութներից:

Ցանկացողները կարող են դիմել «Էրեբունի» հյուրանոց, 3-րդ հարկ, սենյակներ 22, 27, 28

Հեռախոսներ՝ 56-06-35, 58-06-69, 58-76-26

PUBLIGET



LES NOUVEAUX ESPACES
représenté à Yerevan par l'Agence:
KAMAR

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՈՒՂԵՐԹ
Երեւան-Մարսել-Երեւան

Օգոստոսի 17-ին եւ 31-ին
Սեպտեմբերի 14-ին, 21-ին եւ 28-ին

→ Մատչելի գներ
→ Բարձրակարգ սպասարկում
→ 40 կգ ուղեբեռի անվճար փոխադրում

Երեւան, Արշակունյաց 2 1103

✆ 52-68-21, 53-86-84

PUBLIGET



ԻՆԿՈ

«ԻՆԿՈ» բաժնետիրական բանկի Հայաստանի մասնաճյուղը
կատարում է արագ դրամական փոխանցումներ
ՈՒԿՐԱԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
Ընդունում է հայտեր ԱՊՀ այլ երկրներից Հայաստան եւ հակառակը փոխանցումներ կատարելու համար:
Հասցեն՝ Վառոտարան արագի փողոց 2/8, հեռախոս 56-59-74, 56-37-25

PUBLIGET



NICA
INVESTMENT COMPANY

ՆԻԿԱ Ինվեստիցիոն Ընկերությունը Ձեզ համար աննախադեպ հնարավորություն է ընծեռում ներդնել գումարներ մեր ծրագրերում եւ մասնակիցը դառնալ արտադրական, գյուղատնտեսական եւ առեւտրագնման գործունեությանը:

*Իր ավանդատուներին ՆԻԿԱ-ն առաջարկում է.*

- ամենացածր գներով գնել սենդաներ
- մոտ ժամանակում լուծել էներգետիկական պրոբլեմը Ձեր բնակարանում
- ընկերության հրատարակված գործունեության շնորհիվ կրկնապատկել Ձեր կապիտալը:

Մինչեւ 1992 թ. թղթադրամները ընդունվում են նոր դրամաններով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընկերության գրասենյակ:

*ՆԻԿԱ-ն երաշխավորում է.*

ռուբլու ավանդների դեպքում.
**4 ամիս 70 %**
**6 ամիս 120 %**
**12 ամիս 330 %**
տարադրամային ավանդների դեպքում.
**50 % տարեկան**

ՄԵՆՔ ԿԱՐԾՈՒՄ ԵՆՔ,
ԴԱ ՁԵԶ ԿՀԵՏԱՔՐՔՐԻ

Մեր հասցեն՝ Երեւան, Սայաթ-Նովա 7 (Օպերայի դիմաց) Հեռ. 56-79-46

PUBLIGET


## Լուրերի հոսք

### Սպաները լքում են բանակը

Ռուսական բանակից 1993 թ. կրճատման հետեւանքով զորացրվել է 35.5 հազարից ավելի զինծառայող: Տարվա վերջին այդ թիվը կաճի մոտ 3 անգամ: Բացի դրանից, այս տարի ոչնչացվող կլինի 20 հազար սպա, տարին լրանալու կապակցությամբ: Մինչեւ 30 տարեկան մոտ 44 հազար սպա լքել են բանակը զինվորական ծառայության հեղինակազրկման պատճառով: Այս թվերը հրապարակել է Ռուսաստանի պաշտպանության նախարարի տեղակալ Վալերի Միրոնովը օգոստոսի 18-ին Մոսկվայում առուլիսի ժամանակ: Սնարֆ-ՌՈՍ

### Կողոպտել են Նաթո Վաչնաձեի տուն-թանգարանը

Վրաստանում կողոպտել են հայր կինոյի վրացի մեծ դերասանուհի Նաթո Վաչնաձեի տուն-թանգարանը: Երկրի ՆԳՆ մամուլի կենտրոնի տվյալների համաձայն, որտեղ այդ մասին օգոստոսի 18-ին հայտնեցին Սնարֆի թղթակցին, գողերը Կախեթիայի Գուրջաանի գյուղում գտնվող տուն-թանգարանից տարել են պարսկական գորգ, պատի ժամացույց, արծաթե մոխրաման, նույնիսկ նկարի ալրոմ եւ թանգարանի հարուստ ցուցադրանքի ուրիշ շատ նմուշներ: 1930-ական թթ. վախճանված Նաթո Վաչնաձեին Վրաստանում մեծարում են որպես մեծ դերասանուհու: Սնարֆ

### Ամուսինները փոխանակում են կանանց

Բելառուսի հանրապետական սեռաբանական կենտրոնի տնօրեն Կատյուշինի խոսքերով, հանրապետությունում ներկայումս աճում է ախտաբանական սեռական հարաբերությունների քանակը: Այսպես, Մինսկում հայտնվել են այնպիսի ընտանիքներ, որտեղ ամուսինը ունի երկու կին, կամ ամուսինները փոխանակում են իրենց կանանց: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ չափահաս բնակչության 11 տոկոսից ավելին ունի բիսեքսուալ եւ հոմոսեքսուալ հակումներ: Երիտասարդության շրջանում աճում է հակվածությունը սեռական բռնության հանդեպ: Աշակերտուհիների 8 տոկոսը ցանկություն է հայտնել աշխատելու հասարակաց տներում, գրում է «Ձվեզդա» ամսագիրը: ՆՏ-Պրոֆակտում

### Բաց սահմաններ

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Կլաուս Քինկելի էստոնիա միօրյա այցից հետո թղթակիցներին հայտնել է, որ ըստ երեւույթին մոտ ապագայում երկու երկրների սահմանը կբացվի: ՆՏ-Պրոֆակտում


ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

«Հայկական ծրագրեր» ընկերությունն առաջարկում է լավագույն հաշվապահական ծրագրերը ԱՊՀ երկրներում:

Հեռախոսներ
252463, 254758, 584545



Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh® համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Azg armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՆՈՍ ՊԱԼԼԱՔՅԱՆ


digitised by A.R.A.R.@